Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

2275

Մոլիերի

Ագահն

84-2
Մ-86

2011

84-2
Մ-86
Աց

# ԽԱՂԱՐԿՈՒԹԻՒՆՔ ՄՈԼԻԷՐԻ

# ԱԳԱՀՆ

## ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

## Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՈՒԱԾՍ

2003

### ԱՆՁԻՆՔ

ՀԱՐՓԱԿՈՆ · Կլէանթոսի և Էլիզայի հայրն ու Մարիանայի սիրահարը։
ԱՆՍԷԼՄ · Վալերիոսի և Մարիանայի հայրը։
ԿԼԷԱՆԹՈՍ · Հարփակոնի որդի, և Մարիանայի սիրահարը։
ԷԼԻԶԱ · Հարփակոնի աղջիկը։
ՎԱԼԷՐԻՈՍ · Անսելմի որդի և Էլիզայի սիրահարը։
ՄԱՐԻԱՆԱ · Անսելմի աղջիկը։
ՖՐՈԶԻՆԱ · Կին միջնորդ։
ՄԷԹՐ ՍԻՄՈՆ · Միջնորդ։
ՄԷԹՐ ԺԱՔ · Հարփակոնի խոհարարն և կառավարը։
ԼԱ ՖԼԷՇ · Կլէանթոսի ծառան։
ՏԱՄ ԳԼՈՏ · Հարփակոնի կին ծառան։
ՊՐԷՆՏԱՎՈՒԱՆ, ԼԱ ՄԷՐԼԻՒՇ · Հարփակոնի սպասաւորները։
ԳՈՄԻՍԷՐ ՄԸ։

Տեսարանն է Փարիզ՝ Հարփակոնի տունը։

598-ան
22206.

# ԱՐԱՐՈՒԱԾ Ա.

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՎԱԼԵՐԻՈՍ · ԷԼԻԶԱ

Վալերիոս. Ըսէ՛ ինձ, սիրելի՛դ իմ Էլիզա, քու սիրոյդ քաղցր հաւատալիքն ինձ հաստատելէդ ետեւ, ինչո՞ւ այդպէս տխուր կ՚երեւիս։ Կը տեսնեմ որ կը հառաչես, ափսոս, իմ ուրախ եղած ատենս։ Ըսէ՛ ինձ, միթէ զիս երջանիկ ընելուդ համար կը տրտմիս, և քու բռնած զաշնիդ վրայ կը զղջա՞ս, որուն իմ սիրոյս ստիպմամբը հաւանեցար։

Էլիզա. Ո՛չ, Վալերիոս, չեմ կրնար իմ խօսքերուս վրայ զղջալ։ Սիրտս մէջս քեզի հետ է, ու հեզահամբոյր զօրութիւն մը զիս դէպ ՚ի քեզ կը քաշէ. այնպէս որ զքեզ սիրելն անգամ իմ ձեռքս չէ։ Բայց, ճշմարիտն ըսեմ, քու գալ զիս գտնելդ է իմ անհանգստութեանս պատճառը, և շատ կը վախնամ թէ մ՚ուրիշ սէր ցուցընել քեզ, որ պէտք չէի այնպէս ընել։

Վալերիոս. Ի՞նչ բանէ կրնաս վախնալ, Էլիզա, զիս սիրելով։

Էլիզա. Շա՜տ, խիստ շատ պատճառներ ունիմ վախնալու. հօրս բարկութիւնը, ընտանեացս նախատինքը, հասարակաց կշտամբանքը. բայց ամէն բանէն աւելի, Վալերիոս, սրտիդ փոխուելէն, ու այն անգութ սառնութենէն [illegible] քու սեռիդ [illegible]

Վալերիոս. Ա՛հ, մի՛ սխալիր զիս ուրիշներուն պէս դատելու. ըրէ՛ նաեւ մի՛ կասկածիր վրաս, ես իմ սիրոյս վրայ հաստատ եմ, ու իմ սէրս ուրիշ սահման պիտի չունենայ, բայց եթէ կենացս։

Էլիզա. Ա՛հ, Վալերիոս, իւրաքանչիւր որ այդ մի և նոյն խօսքերը կը բանեցնէ։ Ամէն մարդիկ խօսքով իրարու նման են, և միայն իրենց գործքերովը կը զանազանին։

Վալերիոս. Քան որում գործքերով միայն մեր ինչ ըլլալը կ՚իմացուի, սպասէ՛ ուրեմն որ զանի գործքերով իմ սիրտս ալ իմանաս, ու իմ զգուշանալու համար ունեցած երկիւղիս մէջ ընաւ մի՛ կասկածիր։ Մի՛, կ՚աղաչեմ, նախատալից կասկածանց զգալի հարուածներով զիս նեղեր, և ինձ ժամանակ տուր որ հազար ապացոյցներով իմ սիրոյս բոցոյն պարկեշտութիւնը ցուցընեմ։

Էլիզա. Աւա՜ղ, ինչպէս սիրած անձերէն դիւրաւ կը համոզուի մարդ։ Այո՛, Վալերիոս, կը հաւատամ որ չկրնար սիրտդ զիս խաբել։ Կը հաւատամ որ դուն զիս ճշմարիտ սիրով կը սիրես, և թէ ինծի հաւատարիմ ըլլալու ես. որոնց վրայ ամենևին չեմ ուզեր տարակուսիլ, և տրտմութիւնս կը մերժացընեմ, ու ամենևին հոգ պիտի չընեմ վրաս գալու նախատինքներուն։

Վալերիոս. Բայց ինչ է այդ անհանգստութեանդ պատճառը՞։

Էլիզա. Թէ որ ամէն մարդ իմ նայուածքիս պէս քեզի նայէր, ամենևին վախնալու բան չունենալու էի. քու անձդ ինծի սիրելի ըլլալուն համար կը նայիմ որ



քու վրադ ունեցած զգացմանցս համար իրաւունք ունիմ։ Սիրտս երախտագիտութեամբ լցուած է, և ինծի ըրած բարիքդ իր պաշտպանն են։ Ամէն ժամ կը յիշեմ այն զարմանալի վտանգը, որմէ ետև սկսանք մեկզմեկ ճանչնալ. այն զարմանալի վեհանձնութիւնը, որով կեանքդ վտանգի մէջ դրիր ահաւելի ալիքներէն իմ կեանքս ազատելու համար. այն խանդալից խնամքները, որ զիս ջուրէն ազատելէդ ետև ցուցուցիր ինձ, և այն եռանդագին սիրոյ զուարթառատ նուէրները, որուն ոչ ժամանակն և ոչ դժուարութիւնները կրցան արգելք ըլլալ. այն սէրը, որուն համար դուն թէ ծնողքդ և թէ ազգականներդ թողուցիր, և զիս տեսնելու համար հօրս քով ծառայութիւն ընելու խոնարհեցար։ Այս ամէն բաները յիրաւի իմ սրտիս մէջ մեծ ազդեցութիւն կ՚ընեն, և բաւական են ինձ ըրած խոստմանդ վրայ վստահ ըլլալու, բայց գուցէ բաւական չեն ուրիշներուն զայն բաւադրելու համար, և հաւատացած չեմ որ իմ զգացմունքս իմանան։

Վալերիոս. Բաժներուդ մէջէն, միայն իմ քու վրադ ունեցած սիրովս կ՚ուզեմ քովդ բանի մը մէջ հաճելի երևիլ. իսկ քու ունեցած կասկածներուդ համար, գիտցի՛ր որ հայրդ զքեզ ամենուն առջև պիտի ջանայ ջատագովելու [illegible] չափազանց ագահութիւնը, և իր որդւոցը հետ կենցաղավարած խստաբարոյ եղանակն ա[illegible] բաներէն աւելի ուրիշ կերպ պիտի հաստատէին։ Ների՛ ինձ, սիրելի՛դ իմ Էլիզա, առջևդ այսպէս խօսելուս համար։ Այս պարագայիս մէջ գիտես աղէկ որ հայրդ գովելի չէ։ Բայց եթէ, ինչպէս որ կը յուսամ, ծնողքս վերստին գտնելու ըլլամ, կարծեմ որ զանոնք մեր կողմը շահելու մեծ դժուարութիւն պիտի չունենանք։ Անհամբերութեամբ անոնցմէ լուր կ՚ըսպասեմ, և եթէ աւելի ուշանալու ըլլան, ես ինքս պիտի երթամ զանոնք տեսնելու։

Էլիզա. Ա՛հ, Վալերիոս, աստեղէն մի՛ շարժիր, կ՚աղաչեմ. և միայն ջանա՛ որ իմ հօրս քովն աղէկ համարմունք ունենաս։

Վալերիոս. Կը տեսնես ինչպէս միջոցներ կը գործածեմ, ու ինչ վարպետութեամբ ինքզինքս սպրդեցուցի իր քովը ծառայութեան մտնելու համար. ինչպէս համակրութիւն և սէր ցուցընելով կեղծաւորութիւն կ՚ընեմ, որպէս զի անոր հաճելի երևիմ, և ինչպէս ամէն օր խաբէութիւններ կը բանեցընեմ անոր աչքը մտնելու համար։ Յիրաւի շատ աղէկ ճամբան առեր եմ, և կը նայիմ որ մարդիկներուն սիրտը շահելու համար, ուրիշ լաւագոյն ճամբայ չկայ, բայց եթէ՝ ինքզինքնին անոնց սիրելի ընել, անոնց բաղձանքներուն իրաւունք տալ, անոնց յանցանքները շոյել, և բոլոր ըրածնին գովել։ Հարկ չէ անձնահաճութիւն ընելէն վախնալ, և բանեցուցած կեղծաւորութեան կերպն ամենևին [illegible] [illegible] մարդիկն անգամ [illegible] [illegible] դիւրաւ կը [illegible] աւելի [illegible] և ծաղր [illegible]

կայ , որ զանոնք գովելով , անոնց կրեցընես . թէ և բոլոր արուես-տըս քիչ մ' անկեղծութեան կը մեղանչէ , բայց երբ մէկու մը հարկաւորութիւն ունինք , պէտք է որ անոր հաճոյանալու ջանանք· և քան որ միայն այսով անոնց սիրտը կարելի է շահիլ , յանցանքը շողոքորթներունը չէ , այլ շողոքորթուիլ ուզողներունը .

ԷԼԻԶԱ . Բայց ինչու չես ջանար որ եղբօրս օգնականութիւնն ալ շահիս , որպէս զի աղջիկ ծառան ալ մեր գաղտնիքը յայտնելու կարող ըլլայ .

ՎԱԼԵՐԻՈՍ . Երկուքին ալ սիրտը շահիլը դժուար է , ու հօր և որդւոյն գաղափարն իրարու այնպէս հակառակ բաներ են , որ այս գաղտնիքն երկուքնուն մէկտեղ յայտնելը դիւրին բան չէ . Բայց դուն քու կողմէդ եղբայրդ հաւանեցուր , և ձեր իրարու ունեցած սէրը քեզի պաշտպան բռնէ անոր սիրտը մեզի գրաւելու համար : Բայց ահա եղբայրդ կու գայ : Աղէկ ատեն է հիմա , սկսէ անոր հետ խօսելու , և մեր գործին մէջէն քեզի որն որ աւելի պատշաճ կը դատես՝ ան յայտնէ :

ԷԼԻԶԱ . Չեմ գիտեր թէ սրտեօք այս գաղտնիքն անոր յայտնելու համարձակութիւնը պիտի կարենամ ունենալ .

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԿԼԵԱՆԴՐՈՍ · ԷԼԻԶԱ.

ԿԼԵԱՆԴՐՈՍ . Շատ ուրախ եմ դքեզ հոս մինակ գտնելուս , քոյր իմ · և քեզի գաղտնիք մը յայտնելու համար եռանդս գես կը բորբոքէր·

ԷԼԻԶԱ . Պատրաստ եմ մտիկ ընելու , եղբայր իմ . Ի՞նչ ունիս ինձ ըսելու .

ԿԼԵԱՆԴՐՈՍ . Մէկ բառի մէջ պարունակեալ շատ բաներ ունիմ , քոյր իմ · կը սիրեմ .

ԷԼԻԶԱ . Կը սիրես .

ԿԼԵԱՆԴՐՈՍ . Այո , կը սիրեմ : Բայց առաջ յառաջ չանցնելով , գիտեմ որ հայրէ մը կախում ունիմ , թէ որդւոյ անունս անոր կամացը կը հնազանդեցընէ , թէ պէտք չենք բնաւ մեր խօսքը առւանց անոր հաւանութեանը , որմէ կը ծնանիմք · թէ Աստուած զանոնք մեր ըղձիցը տէր և իշխան դրաւ , և թէ պատուիրած է որ անոնց առաջնորդութեամբը միայն մեր իղձը տնօրինեմք , որոնց առջին ամենևին մոլի առփանք մը չեղելով , մեզմէ աւելի քիչ կը խաբուին , և մեզի յառաջ եղածը մեզմէ շատ աղէկ կը տեսնեն , Պէտք է աւելի իրենց գիտութեանը վրայ վստահ ըլլալ , քան մեր կոյր կարութեանը՝ և բռնաւորութեան բուռն կիրքերը շատ անգամ զմեզ դժընդակ գահավէժներու մէջ կը քաշեն . Բոլոր այս բաները քեզ կ'ըսեմ , քոյր իմ , որպէս զի դուն ալ նոյն բաները կրկնելու չի պարտաւորիս · ինչու որ սէրս բան մը մտիկ ընել չուզեր և կ'աղաչեմ որ ամենևին խրատ չի տաս ինձ :

ԷԼԻԶԱ . Սիրած աղջկանդ հետ խօսք բրած ես , եղբայր իմ .

ԿԼԵԱՆԴՐՈՍ . Ոչ · բայց միտքս դրրեր եմ · դարձեալ կ'աղաչեմ , իմ դիտաւորութիւնէս հրաժարեցընելու համար պատճառներ յառաջ մի բերեր ինձ .



ԷԼԻԶԱ . Միթէ այնպէս անհեթեթ անձ մ'եմ ես , եղբայր իմ :

ԿԼԵԱՆԴՐՈՍ . Ոչ , քոյր իմ · բայց դուն մէկը չես սիրեր · Չես գիտեր ինչպէս խանդակաթ սէրը մեր սրտերնուս վրայ քաղցր լուծ մը կը դնէ , և քու զգօնութենէդ կ'ախնածեմ ես :

ԷԼԻԶԱ . Ահ , եղբայր իմ , զգօնութեան վրայօք չի խօսինք , մարդ մը չիկայ որ այն բանը չունենայ , գոնէ իր կենացը մէջ մէկ անգամ մը , և թէ որ իմ սիրտս բանալու ըլլամ , դուցէ քու աչացդ առջև աւելի քիչ զգօն երևիմ :

ԿԼԵԱՆԴՐՈՍ . Ահ , երանի՜ թէ քու սիրտդ ալ , իմինիս պէս . . . .

ԷԼԻԶԱ . Նախ քուկդ նայինք , ըսէ ինծի , ո՞վ կը սիրես .

ԿԼԵԱՆԴՐՈՍ . Մէկ ծաղկահաս անձ մը , որ քիչ ատենէ հետէ աս թաղերը կը բնակի , և կարծես թէ անիկա ամէն զինքը տեսնողներուն սէրը գրաւելու համար ստեղծուած է : Քոյր իմ , բնութիւն ասկէ աւելի սիրատուն անձ մը ներկայացուցած չէ ու տեսած վայրկենէս 'ի վեր սիրտս անոր փախուեցաւ : Անունը Մարիանա է , և իր մօրը կառավարութեան տակը կ'ապրի , որ բարի կին մ'է և գրեթէ միշտ հիւանդ , և որուն վրայ աս սիրելի աղջիկն ունեցած սիրոյ զգացմունքներն երևակայութենէ վեր են : Այնպէս գորովանօք կը գրկէ , կու լայ և կը մխիթարէ զան , որ մարդուն սիրտը կ'ելլէ : Իր բոլոր գործքերուն մէջ կը փայլին չնորհալի շարժուածքներ , սիրու քաղցր քաղցրութի մը , յանկուցիչ գեղեցկութիւն մը , չնաշխարհիկ պարկեշտութի մը , մէկ . . . ա՜հ , քոյր իմ , կ'ուզէի որ անգամ մը տեսած ըլլայիր .

ԷԼԻԶԱ . Այդպէս աղջիկներ շատ կը տեսնեմ , եղբայր իմ , և անոր ինչպէս ըլլալը հասկընալու համար , բաւական է որ զան սիրես :

ԿԼԵԱՆԴՐՈՍ . Գաղտուկ կերպով մը իմացայ որ անոնց ամէն բանը տեղը չէ , և իրենց չափաւոր ծախուցը համար՝ հազիւ իրենց ձեռք անցուցած ստակը կրնայ բաւել . Մտածէ՛ անգամ մը , քոյր իմ , ինչ ուրախութիւն կրնայ ըլլալ մէկու մը , երբ իր սիրած անձին վիճակը կարենայ բարւոքցընել , երբ գաղտուկ կերպով այնպէս առաքինի ընտանիքի մը չափաւոր հարկաւորութեանց փոքրիկ օգնութիւններ ընէ : և հասկցի՛ր ինչ վիշտ է սրտիս , երբ կը նայիմ որ հօր մը ագահութեամբն այս ուրախութիւնը վայելելու , և իմ սիրոյս նշան մ' այս գեղեցիկ անձին յայտնելու անկարող ըլլամ :

ԷԼԻԶԱ . Այո , աղէկ կը հասկընամ , եղբայր իմ , այդ տրտմութեանդ պատճառը .

ԿԼԵԱՆԴՐՈՍ . Ահ , քոյր իմ , սաստիկ մեծ է տրտմութիւնս : Ո՜ր ինչ անգթութիւն է , որ մեզի համար այսպէս խիստ խնայողութիւն կ'ընեն · ինչ պիտ'ըլլայ աս տարօրինակ չափաւորութիւնը , որով զմեզ կը տանջեն : Ինչ բանի պիտի ծառայէ հարստութիւն ունենալնիս , երբ ան ժամանակը ձեռքերնիս պիտ'անցնի , որ անոր ուրախութիւնը վայելելու տարիքերնիս անցած պիտ'ըլլայ · միայն պէտքս հոգալու համար , ու[...] կողմէն զինքս պարտքի տա[...] ձգեմ հիմա , երբ ստիպու[...]

ես և դուն ամէն օր երթալ վաճառականներէն օգնութիւն խնդրել փոխելու զգեստներ հագնելու միջոց ունենալու համար. Ուզեցի որ քեզի հետ խօսիմ, որպէս զի ինծի օգնես թէ ինչպէս մեր հօրն իմ սրտիս զգացմանց վրայ խօսիմ. եթէ տեսնեմ որ դէմ կը կենայ, միտքս դրեր եմ այն սիրուն անձին հետ ուրիշ տեղ երթալ և այն բաղդը վայելել, որ Աստուած պիտի բարեհաճի մեզ ձօնելու: Աս բանիս համար, պիտ՚երթամ ամէնէն փոխ-առակ խնդրեմ. եթէ քու գործքերդ ալ, քոյր իմ, իմ գործքերուս նման են, և եթէ մեր հայրը մեր ուզածին դէմ դնելու ըլլայ, երկուքնիս ալ մինակ կը թողունք զինքը, և այն բռնութենէ կ՚ազատինք, որուն մէջ իր անտանելի ագահութեամբն այնչափ երկար ատենէ ՚ի վեր զմեզ կը նեղէ:

Էլիզա. Ճշմարիտ օրէ օր մեր մօրը մահուանը վրայ տրտմելու աւելի միջոցներ կուտայ, և....

Կլէանթոս. Իր ձայնը կը լսեմ. Հեռանանք ասկէ, որ մեր գաղտնիքն իրարու հաղորդելու կարենանք, ու յետոյ ես և դուն մէկ կ՚ըլլանք անոր բնութեան խստութեանը դէմ դնելու:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀԱՐՓԱԿՈՆ (մինակ)

Անշուշտ, քիչ նեղութիւն չէ տանը մէջ ստակի մեծ գումար [illegible]պահել. բարեբաղդաբար ա[illegible]ունիք աւելի զետեղուած է, [illegible] մեր ծախքին ըլլալու ստա-կը կ՚ատամ քափ՚. Դիւրաւ չէ բոլոր տան մէջ պահելու ապահով տեղ մը գտնել. ինչու որ ինծի համար ամուր սնտուկները կասկածելի են. և չեմ ուզեր անոնց բնաւ վստահ ըլլալ. ես զանոնք գողերու անաշխատ և ապաստան մը կը կարծեմ. և միշտ առաջին բանն ան կը փնտրեն.

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՀԱՐՓԱԿՈՆ. ԷԼԻԶԱ և ԿԼԷԱՆԹՈՍ (Բեմին ներքի կողմը կեցած՝ իրարու հետ խօսելով)

Հարփակոն. (Զինքը մինակ կարծելով) Սակայն չեմ գիտեր թէ արդեօք աղէկ բրած կ՚ըլլամ, որ պարտէզիս մէջ տասը հազար ոսկիս թաղեմ, զոր երէկ ինծի տուին: Տասը հազար ոսկի մարդու մը տանը կարծեմ պզտիկ գումար մը չէ... (Տեսնելով Էլիզան և Կլէանթոսը փսփսալով) Ո՜հ Աստուած, ես զիս կը մատնեմ. եռանդս զիս յափշտակած պիտ՚ըլլայ, և զինքս մինակ կարծելով վախնամ որ բարձր խօսեցայ: (Կլէանթոսին և Էլիզային) Ի՞նչ է ան:

Կլէանթոս. Ոչինչ, հայր իմ:

Հարփակոն. Շատ ատենէ որ հոս էք.

Էլիզա. Դեռ հիմա եկանք.

Հարփակոն. Լսեցիք...

Կլէանթոս. Ի՞նչ, հայր իմ.

Հարփակոն. Բանը...

Էլիզա. Ի՞նչ.

Հարփակոն. Ըսածս.

Կլէանթոս. Ո՛չ.

Հարփակոն. Այո՛, այո՛:

Էլիզա. Ներեցէք ինծի.

Հարփակոն. Կը տեսնեմ որ դուն քանի մը բառ լսեր ես: Ես ինքզինքս կ՚ըսէի թէ ինչ նեղութի-



պիտի կրէի այսօր ստակ առնելու համար. և կ՚ըսէի թէ շատ երջանիկ է մէկը, երբ տասը հազար ոսկի իր տանը մէջ կարենայ ունենալ:

Կլէանթոս. Վախնալով որ չըլլայ թէ ձեր խօսքը ընդմիջենք, ձեզի մօտենալ կը ձեւացնէինք.

Հարփակոն. Շատ ուրախ եմ որ աս բանը ձեզի ըսի, որպէս զի ծուռ չի հասկընաք և այնպէս երեւակայէք որ ես ըսի թէ տասը հազար ոսկի ունիմ:

Կլէանթոս. Ձեր գործքերուն մենք չենք խառնուիր:

Հարփակոն. Երանի թէ տասը հազար ոսկի ունենայի.

Կլէանթոս. Չեմ կարծեր...

Հարփակոն. Աղէկ գործ մը կ՚ըլլար ինծի.

Էլիզա. Ասոնք այնպէս բաներ են...

Հարփակոն. Շատ հարկաւորութիւն ունենալու էի:

Կլէանթոս. Կը մտածեմ որ...

Հարփակոն. Ինծի շատ պիտ՚օգնէր.

Էլիզա. Դուք...

Հարփակոն. Անատեն պիտի չգանգատէի, ինչպէս որ կ՚ընեմ, ըսելով որ ժամանակը դժբաղդ է.

Կլէանթոս. Ա՜հ, հայր իմ, դուք գանգատելու տեղի չունիք, և ամէն մարդ գիտէ որ դուք բաւական հարստութիւն ունիք:

Հարփակոն. Ի՞նչ ըսիր, բաւական հարստութիւն ունիմ. ատ ըսողը սուտ խօսացեր է: Ասկէ աւելի սուտ բան մը չի կայ. և անզգամ մարդիկ են, որ այսպէս ձայներ կը հանեն.

Էլիզա. Մի՛ բարկանաք.

Հարփակոն. Զարմանալի բան է, որ իմ զաւակներս զիս մատնեն և իմ թշնամիներս ըլլան.

Կլէանթոս. Հարստութիւն ունիս ըսելով թշնամի՞ կ՚ըլլայ մարդ:

Հարփակոն. Այո՛. այսպէս խօսքերը և ձեր բրած ծախքերը պատճառ պիտ՚ըլլայ որ՝ օր մը տանս պիտի գան ու գլուխս կտրեն կարծելով թէ ես խիստ հարուստ եմ.

Կլէանթոս. Ի՞նչ մեծ ծախքեր են ըրածնիս:

Հարփակոն. Ինչ մեծ ծախքե՞ր, կ՚ըսես: Ասկէ աւելի գայթակղեցուցիչ բան մը կա՞յ, որ դուք մեծածախ զգեստներ հագած՝ բոլոր քաղաքին մէջ կը պտըտիք: Երէկ քրոջդ հետ կռիւ կ՚ընէի. բայց քուկդ անորմէ գէշ է: Ահա՛ աս բանս երկնից վրէժխնդրութիւնը կը բաղձէ. և ոտքերէդ մինչև գլուխդ ունեցած զարդերը հաշուելով, տան մը բոլոր ծախքերը կրնան հատուցուիլ: Քսան անգամ ըսի քեզի, որդեակս, քու բոլոր գնացքներդ զիս խիստ կը նեղացընեն. ինքզինքդ մարքէզի կը ձեւացընես. և այդպէս հագուելու համար, անշուշտ ինծմէ ծածուկ բան կը գողնաս.

Կլէանթոս. Ա՜հ, ինչպէս կրնամ գողնալ ձեզմէ:

Հարփակոն. Ի՞նչ գիտնամ ես: Այդպէս հագուստի համար այսչափ ստակն ո՞ւրկից կրնաս գտնել:

Կլէանթոս. Ե՛ս, հայր իմ. խաղալը կը խաղամ, և ինչպէս որ շատ յաջողակ եմ, բոլոր վաստըկած ստակս վրաս կը վատնեմ:

Հարփակոն. Շատ գէշ կ՚ընես: Թէ որ խաղալու մէջ վաստըկեր ես, անոր օգուտը տեսնելու էիր. և շահած ստակդ վաշխի դնելով, որ

մը մեծ գումար մ՚ բռնանալու էիր ։ Ամէն բաները թողուլ, կ՚ուզէի գիտնալ թէ այդ ոտքէդ մինչև գլուխդ բեռնաւորած սա ժապաւէններն ինչ բանի կը ծառայեն ․ և թէ վարտիք մը կապելու համար վեցը ժապաւէն բաւական չէ՞ ։ Հարկաւո՞ր է կեղծ ծամերու ստակ վատնել, երբ մէկն իր գլխի մազերն ունի, որոնք ծախք չունին ։ Գրաւ կը դնեմ որ կեղծամները և ժապաւէնները գոնէ քսան ոսկի կ՚արժեն ․ քսան ոսկին տարին կը բերէ տասն և ութը ֆրանք վեցը փող և ութը դենար՝ տասն՚երկու շահով ։

Կլէանդր . Իրաւունք ունիք ։

Հար. Թողունք ատոր, և ուրիշ խօսքեր ընենք ։ (Տեսնելով Կլէանդրը և Էլիզը իրարու նշաններ ընելն) Ի՞նչ է ան ։ (Ցած ձայնով ինքնիրեն) կարծեմ որ իրարու նշան կ՚ընեն քսակս գողնալու համար ։ (Բարձր ձայնով) ։ Այդ շարժմունքներն ինչ կը նշանակեն ։

Էլիզա . Եղբայրս և ես կը մտածենք թէ ով առաջ խօսի, երկուքնիս ալ ձեզի ըսելու խօսք ունինք ։

Հարփական . Ես ալ ձեզի երկուքնուդ ալ ըսելու խօսք ունիմ .

Կլէանդր . Մենք ամուսնութեան վրայ կ՚ուզենք խօսիլ, հայր իմ ։

Հարփական . Ես ալ ամուսնութեան վրայ պիտի խօսիմ ։

Էլիզա . Ա՜հ, հայր իմ .

Հարփական . Ինչո՞ւ այդպէս ձայն կը հանես, աղջիկս ․ ամուսնութեան բա՞ռն է քեզի վախցընողը թէ նոյն ինքն ամուսնութիւնը ։

Կլէանդր . Ամուսնութիւնն երկուքնիս ալ կրնայ վախցընել ձեր հաւանութեանը նայելով, և կը վախնանք որ մեր զգացմունքը ձեր ընտրութեան հետ համաձայն չըլլան ։

Հարփական . Քիչ մը համբերեցէք ։ Մի՛ խռովիք ։ Ձեր երկուքնուդ ալ պէտք եղածը գիտեմ, և իմ ձեզի ընելու որոշումներուս վրայ տրտնջելու ամենեւին առիթ պիտի չունենաք ։ Նախ քեզմէ սկսիմ (Կլէանդրին), ըսէ՛ ինծի, հոս մօտերս բնակող Մարիանա անուն ծաղկահասակ անձ մը տեսած ես ։

Կլէանդր . Այո՛, հայր իմ ։

Հարփական . Դո՞ւն, Էլիզա .

Էլիզա . Անոր վրայօք խօսուիլն լսեր եմ .

Հարփական . Ան աղջիկը ինչպէս է տղա՛ս ,

Կլէանդր . Խիստ նազելի անձ մ՚է ։

Հարփական . Դիմաց տեսիլն ինչպէս է .

Կլէանդր . Շնորհալի համեստ և ուշիմ .

Հարփական . Իր տեսուածքն ու ձևը ։

Կլէանդր . Սքանչելի են չքնաղ

Հարփական . Չե՞ս կարծեր որ այդպէս աղջիկ մ՚արժանի է որ մեզի հարս ըլլայ .

Կլէանդր . Այո՛, հայր .

Հարփական . Աս փափագելի ամուսնում մ՚է անշուշտ .

Կլէանդր . Խիստ փափագելի ։

Հարփական . Աղէկ տանտիկնութիւն ընող կ՚երևի .

Կլէանդր . Անշուշտ .

Հարփական . Եւ անոր երիկը շատ գոհ պիտ՚ըլլայ անկէ .

Կլէանդր . Ստուգիւ .

Հարփական . Պզտիկ դժուարութի մը կայ, կը վախնամ որ իր հետ որ օժիտ (ձէհէզ) պիտի չկրնանք տանուլ .

Կլէանդր . Ա՜հ, հայր իմ, այսպէս համեստ անձի մը հետ կարգուելու ատեն՝ անորմէ օժիտ չփնտռուիր ։

Հարփական . Ներէ, ներէ . Ըստ իմ կարծեացս . եթէ չկրնանք պահանջուած օժիտն առնուլ, պէտք է ջանանք որ ուրիշ կողմանէ գոնէ շահ մ՚ունենանք ։

Կլէանդր . Անշուշտ .

Հարփական . Վերջապէս ուրախ եմ որ քու միտքդ իմինիս համաձայն տեսայ ․ ինչու որ իր դիմաց տեսիլն և քաղցրութիւնն իմ սիրտս գրաւեցին, և միտքս դրեր եմ անոր հետ կարգուիլ, միայն թէ՝ եթէ անոր հետ քիչ մ՚ալ օժիտ տան .

Կլէանդր . Ո՜հ ։

Հարփական . Ի՞նչ կայ .

Կլէանդր . Միտքդ դրե՞ր ես, կ՚ըսես . . .

Հարփական . Այո՛, Մարիանային հետ կարգուելու ։

Կլէանդր . Մի՛ . դո՞ւն, դո՞ւն

Հարփական . Այո՛ . ես, ես, ե՛ս . Ի՞նչ ըսել կ՚ուզես .

Կլէանդր . Ո՜հ, յանկարծ աչքերս մթագնեցան ․ երթամ հեռանամ ասկէ ։

Հարփական . Հիմա կ՚անցնի ։ Շուտով գնա խոհանոցը մեծ բաժակ մը յստակ ջուր խմէ .

### ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՀԱՐՓԱԿԱՆ . ԷԼԻԶԱ

Հարփական . Ինչ տկար տարփածուներս, որ հաւերու չափ ուժ չունին ։ Ահա՛, աղջիկս, ինծի համար ես ան աղջիկն ուզեցի ․ իսկ քու եղբօրդ մէկ այրի կին մը պիտի տամ, որուն համար սա առտու եկան ինծի խօսեցան ․ և քեզ պարոն Անսելմին պիտի տամ .

Էլիզա . Պարոն Անսելմի՞ն .

Հարփական . Այո՛ . հասուն, խելացի և համեստ մարդ մ՚որ հազիւ յիսուն տարեկան է, և որուն մեծ հարստութիւն կը գովեն .

Էլիզա . (ակնածութեամբ ծռելով) . ամենեւին չեմ ուզեր կարգուիլ, հայր իմ, թէ որ կը հաճիք ։

Հարփական . (Էլիզային պէս ընելով) . Ես ալ, իմ սիրելի աղջիկս, իմ հոգիս, կ՚ուզեմ որ կարգուիս, թէ որ կը հաճիս .

Էլիզա . (ակնածութեամբ ծռելով) . Թողութիւն կը խնդրեմ հայր իմ .

Հարփական (Էլիզային պէս ընելով) . Թողութիւն կը խնդրեմ, աղջիկս .

Էլիզա . Պարոն Անսելմին խիստ խոնարհ աղախինն եմ ․ Բայց (դարձեալ ակնածութեամբ ծռելով), ձեր հրամանովը, անոր հետ պիտի չկարգուիմ .

Հարփական . Ես ալ քու խիստ խոնարհ ծառադ եմ ․ բայց (դարձեալ Էլիզային պէս ընելով), քու հրամանովդ, անոր հետ պիտի կարգուիս աս գիշեր .

Էլիզա . Ա՞ս գիշեր ։

Հարփական . Այո՛ ․ աս գիշեր .

Էլիզա (դարձեալ ակնածութեամբ ծռելով) . անկարելի է, հայր .

Հարփական (դարձեալ Էլիզային պէս ընելով) . կարելի է, աղջիկս .

Էլիզա . Ոչ .

Հարփական . Այո՛ .

Էլիզա . Ոչ, կ՚ըսեմ .

Հարփական . Այո՛, կ՚ըսեմ ։

Էլիզա . Ես այնպէս բան մ՚է

որ դուք չէք կրնար ստիպել զիս .

Հարփակոն . Աս այնպէս բան մ'է , որ ես կրնամ ստիպել զքեզ .

Եղիզա . Ինքզինքս կը մեռցընեմ ու այնպէս էրիկ մը չեմ առներ :

Հարփակոն . Ինքզինքդ պիտի չի մեռցընես և պիտի կարգուիս անոր հետ . Բայց նայէ ինչպէս յանդգնութիւն կ'ընէ . Ո՞վ երբեք տեսնուած է որ աղջիկ մ'իր հօրը հետ այսպէս խօսի .

Եղիզա . Բայց երբեք տեսնուած է որ հայր մ'իր աղջիկն այսպէս կարգէ .

Հարփակոն . Աս այնպէս որոշմունք մ'է , որուն ըսելիք չի կայ · և գրաւ կը դնեմ որ ամէն մարդ իմ ընտրութեանս հաւանութիւն պիտի տայ .

Եղիզա . Ես ալ գրաւ կը դնեմ որ ամէնէն խելացի մարդ մ'աս բանիս հաւանութիւն պիտի չտայ :

Հարփակոն (հեռուէն Վալերիոսը տեսնելով) · Ահա Վալերիոսը կու գայ . կ'ուզես որ մեր երկուքնուս աս դատին մէջ դատաւորն ընենք զան .

Եղիզա · Կը հաւանիմ .

Հարփակոն Անոր կտրած վճռոյն պիտի հնազանդիս .

Եղիզա . Այո · բոլոր ըսածները կ'ընդունիմ .

Հարփակոն . Լմնցաւ .

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՎԱԼԵՐԻՈՍ · ՀԱՐՓԱԿՈՆ · ԵՂԻԶԱ

Հարփակոն՝ Հոս եկուր , Վալերիոս · զքեզ ընտրեցինք որ մեզ ըսես թէ ով իրաւունք ունի աղջիկս թէ ես .

Վալերիոս . Անշուշտ դուք պարոն .

Հարփակոն . Բայց գիտե՞ս աղէկ թէ ինչ բանի վրայ կը խօսինք .

Վալերիոս . Ոչ · բայց դուք չէք կրնար սխալիլ , և իրաւունքը ձերն է .

Հարփակոն . Կ'ուզեմ այս իրիկուն զան մէկ հարուստ և համեստ մարդու մը հետ կարգել , և աս անզգամը երեսիս համարձակ կ'ըսէ թէ չուզեր առնուլ զան : Դուն ինչ կ'ըսես ասոր .

Վալերիոս . Ինչ կ'ըսեմ :

Հարփակոն . Այո .

Վալերիոս . Հէ հէ .

Հարփակոն . Ի՞նչ .

Վալերիոս . Կ'ըսեմ թէ բոլորովին իրաւունքը ձերն է , և չէք կրնար իրաւունք չունենալ · սակայն աղջիկնիդ ալ բոլորովին յանցաւոր չէ , և . . .

Հարփակոն . Ինչպէ՞ս · պարոն Անսելմը խիստ յարմար է · ազնուատահմ , քաղցրաբարոյ , զգօնամիտ , հանձարեղ և խիստ փայելուչ ազնուական մ'է · որ իր առաջին կնիկէն ամէնևին զաւակ մը չունի : Կրնա՞յ աղջիկս ասկէ աւելի աղէկին իյնալ .

Վալերիոս . Իրաւ է · բայց կրնայ ձեզի ըսել թէ խիստ կ'աճապարէք , և թէ պէտք է գոնէ քիչ մ'ատեն սպասել և նայիլ թէ իր սէրը կը համաձայնի անոր . . .

Հարփակոն . Այնպէս առիթ մ'է որ փախցընելու չի գար . Ես այնպէս շահ մը կը տեսնեմ աս բանիս մէջ որ երբեք չէի կրնար գտնել · Պարոն Անսելմ կը խոստանայ առանց օժիտ առնուլ :

Վալերիոս . Առանց օժիտ :

Հարփակոն . Այո :

Վալերիոս . Ալ ըսելու խօսք չունիմ : Կը տեսնէք , այդ իրաւունքը բոլորովին համոզիչ է · պէտք է ասոր հաւանիլ :

Հարփակոն . Աս բանս ինծի համար խիստ մեծ խնայողութիւն է :

Վալերիոս . Ճշմարիտ է · ասոր ընդդիմութեան բան չկայ : Իրաւ է որ աղջիկդ կրնայ ըսել թէ՝ ամուսնութիւնը կարծածնուն աւելի մեծ գործ մ'է · բոլոր կենաց մէջ երջանիկ կամ դժբաղդ ըլլալու վրայ է բանը , և ասանկ դաշինք մը , որ մինչև 'ի մահ կը տևէ , խիստ մեծ զգուշութեամբ պէտք է ընել :

Հարփակոն · Առանց օժիտ .

Վալերիոս . Իրաւունք ունիք · աս խօսքն ամէն բան կը վճռէ : Կան այնպէս մարդիկներ , որոնք կրնան ըսել ձեզ թէ՝ այսպէս առիթներու մէջ աղջկան մը հակամիտութիւնը այնպէս բան մ'է որ պէտք է անոր ակնածութիւն ընել · և անոնց հասակին , բնաւորութեանը և զգացմանց չափազանց անհաւասարութիւնը՝ ամուսնութիւն մը խիստ գժնդակ արկածներու առարկայ կ'ընէ .

Հարփակոն . Առանց օժիտ .

Վալերիոս . Ահ , ասոր պատասխան մը չկայ , աղէկ գիտենք , ո՞վ կրնայ ասոր դէմ դնել . Բայց չէ թէ շատ հայրեր կան , որոնք բաստակէն աւելի իրենց աղջկանց հաճութիւնը կատարել ուզեն , երբեք զանոնք շահու չզոհեն · և ամէն բանէն աւելի , ջանան իրենց ըրած ամուսնութեանը մէջ այն քաղցր համախմբութիւնը դնել , որ ամուսնացելոց պատիւը , հանգստութիւնը , և ուրախութիւնը հաստատուն կը պահէ մինչև ցմահնան , և թէ . . .

Հարփակոն . Առանց օժիտ :

Վալերիոս . Սուտ է · ասիկա ամէնուն բերանը կը գոցէ . Առանց օժիտ . Ասիկա պատճառ մը , որուն ընդդիմութիւն չ'ըլլար .

Հարփակոն (առանձին՝ պարտէզին կողմը նայելով) . Ահ , կարծես թէ շուն մը հաչելը կը լսեմ . Չըլլա՞յ թէ ստակիս աչք ունին . (Վալերիոսին) Ասկէ մ'երթար : Հիմա կու գամ :

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԵՂԻԶԱ · ՎԱԼԵՐԻՈՍ

Եղիզա . Այսպէս խօսելով , Վալերիոս , միթէ կատա՞կ ընել կ'ուզես :

Վալերիոս . Ես զան չբարկացնելու , և դիւրաւ համոզելու համար ըրի . Իր զգացմանց ընդդիմանալն ամէն բան խանգարելու միջոց մ'է . Այնպիսի մարդիկներ կան , որոնց հետ պէտք է հնարքներով վարուիլ · բնաւորութիւններ կան , որ ընդդիմութեան թշնամի են , յամառ բնութիւններ՝ զորոնք ճշմարտութիւնը կը բարկացընէ , որոնք միշտ արդարութեան ուղիղ ճանապարհին դէմ կը կենան , և միայն նենգաւք զանոնք մեր բաղձանացը կրնանք հաւանեցընել . Դուն իր ուզածին հաւանիլ ձևացուր , աւելի յաջողութեամբ բաղձանացդ կը հասնիս , և . . .

Եղիզա . Բայց այս ամուսնութիւնը , Վալերիոս .

Վալերիոս . Հնարքներ կը գտնենք ետ ընելու համար .

Եղիզա . Բայց ինչ հնարքներ կրնանք գտնել , երբ ամուսնութիւնս այս իրիկուն պիտի կատարուի .

Վալերիոս . Ատեն կ'ուզես և հի֊

ւանդ կը ձեւանաս ։

Էլիզա. Բայց խորամանկութիւնը կ'իմացուի թէ որ բժիշկները կանչուին ․

Վալերիոս. Գնա՛ բանից. Կը կարծես թէ անոնք բան մը կը հասկընա՞ն բժշկութեան մէջ. Նոււ հոգ մ'ըներ, անոնց օգնութեամբ՝ ուզած հիւանդութիւնդ կրնաս ունենալ. և միթէ անհնար որ անոր ուրիշ յառաջ գալուն վրայ պատճառները յօդելու ախտախառին ․

### ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՀԱՐՊԱԿՈՆ, ԷԼԻԶԱ, ՎԱԼԵՐԻՈՍ

Հարպակոն (առանձին՝ Բեմին ներքեւ կողմը). Բան մը չէ, փառք քեզ Աստուած ։

Վալերիոս (առանց Հարպակոնը տեսնելու). Վերջապէս փախչելը միայն կրնայ զմեզ ամէն բանէն ազատել. և եթէ, սիրասուն Էլիզա, իմ վրաս ունեցած սէրդ հաստատ է. . . (Հարպակոնը տեսնելով) Այո, պէտք է որ աղջիկ մ'իր հօրը հնազանդի։ Պէտք չէ որ նայի թէ էրիկն ինչպէս մարդ է. և երբ առանց օժիտի մեծ խրատուները կայ, պէտք է որ աղջիկն իրեն ինչ որ տան՝ ան առնու ։

Հարպակոն. Կեցցե՛ս, հիմա աղէկ խօսեցար ․

Վալերիոս. Պարոն, ներեցէք ինծի մը նեղանալուս, և աղջիկնուդ հետ այսպէս համարձակութեամբ խօսելուս համար ․

Հարպակոն. Ինչպէս. շատ ուրախ եմ և կուզեմ որ անոր վրայ բացարձակ իշխանութիւն մը ցուցունես. (Էլիզային) Այո, որչափ որ փախչիս՝ պարապ է. Աստուծոյ ինծի տուած հայրական իշխանութիւնն անոր կուտամ. և կ'ուզեմ որ բոլոր անոր քեզի ըսածը կատարես ։

Վալերիոս. (Էլիզային) Ասկէ ետքը՝ իմ ցուցուցած ձանրաներուս դէմ կեցիր, կը տեսնես ։

### ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՀԱՐՊԱԿՈՆ, ՎԱԼԵՐԻՈՍ

Վալերիոս. Պարոն, ետևէն միտք երթամ իրեն տուած խրատներս շարունակելու համար ․

Հարպակոն. Այո. զիս շնորհակալ կ'ընես, Անշուշտ . . .

Վալերիոս. Անոր սանձը քիչ մը վեր բռնելն (խստութեամբ վարուիլ) աղէկ է ։

Հարպակոն. Ստոյգ է. Պէտք է . . .

Վալերիոս. Նոււ հոգ մ'ընէք. կարծեմ թէ միտքը կարենամ համոզել.

Հարպակոն. Ինչ որ կուզես՝ ըրէ, ես պիտ՝ երթամ քաղաքին մէջ անգամ մը դառնամ, և անմիջապէս պիտի գամ ։

Վալերիոս (ետքը Էլիզային ուղղելով, և անոր գացած տեղէն ինքն ալ երթալով). Այո, սակն աշխարհիս ամէն բաներէն թանկագին է. և պէտք ես շնորհակալ ըլլալ Աստուծոյ որ այսպէս համեստ հայր մը տուեր է քեզ. Ապրիլն ինչ ըսելը գիտէ ։ Երբ մէկը խոստանայ աղջիկ մ'առանց օժիտ առնուլ, ալ ուրիշ նայիլ պէտք չէ. Ամէն բան ասոր մէջ պարունակեալ է. և առանց օժիտի գեղեցկութեան, երիտասարդութեան, ազնուականութեան, պատուոյ, իմաստութեան, և առաքինութե



անց տեղը կը բռնէ ․

Հարպակոն (առանձին). Ահ. աս ինչ խելացի տղայ մ'է. հիմա պատգամի պէս խօսեցաւ ։ Երանի անոր որ ասոր պէս ծառայ մը կրնայ ունենալ ․

## ԱՐԱՐՈՒԱԾ Բ.

### ՏԵՍԱՐԱՆ Ա.

Կլեանդոս. Ահ, նենգաւոր, ո՞ւր ես, ո՞ւր գացիր խօթուեցար. Ես քեզի պատուիրած չէի . . .

Լա Ֆլէշ. Այո, պարոն, հոս եկեր ձեզ անպատճառ կ'սպասէի, բայց ձեր պարոն անշնորհ հայրը դուրս վանեց զիս. թէ և ես դեմ գրի, բայց վախնալով որ չլլայ թէ զիս ծեծէ՝ դուրս ելայ ։

Կլեանդոս. Գործերնիս ինչպէս երա. Պարագաներն առաջուանէ աւելի սաստկացան են. զքեզ չտեսնելէս 'ի վեր, իմացայ որ հայրըս իմ նախանձորդս է եղեր ։

Լա Ֆլէշ. Ինչ. հայրդ սիրահարի.

Կլեանդոս. Այո. և խիստ մեծ դժուարութեամբ կրցայ այս լուրոյն սրտիս պատճառած խռովութիւնն անորմէ ծածկելու ։

Լա Ֆլէշ. Ան ինչզինք սիրահարութեան տայ ։ Միտքն ինչ է արդեօք. Աշխարհքը ծաղր ընելու եկեր է. և միթէ սէրն անոր պէս ծեր մարդոց համար եղած է ։

Կլեանդոս. Իմ մեղքերուս համար է որ աս ցանկութիւնն անոր փորը մտաւ ։

Լա Ֆլէշ. Բայց ինչ պատճառաւ իրմէ ձեր սէրը պահեցիք ․

Կլեանդոս. Որպէս զի անոր կասկած չտամ, և եթէ աս ամուսնութեան ընելու համար բանեցուցած հնարքներս յայտնուին՝ հարկը պահանջած ատենը զինքը պաշպանեմ ։ Իր գործին համար ինչ պատասխան առիր ։

Լա Ֆլէշ. Ճշմարիտ կ'ըսեմ, պարոն, անոնք որ փոխ առակ կ'ուզեն՝ ողորմելի են. և երբ սախպուած է մէկը, ինչպէս էք դուք, կծծի փոխատուներուն ձեռքն իյնալու, պէտք է որ անօրինակ բաներու համբերէ ։

Կլեանդոս. Ինչպէս, գործը բոլորովին չյաջողեցա՞ւ ։

Լա Ֆլէշ. Ներողութիւն շնորհեցէք, Մեթր Սիմոն՝ աս գործին աշխոյժ և խիստ գործունեայ միջնորդը կ'ըսէ թէ ձեզի համար իր բոլոր ջանքն 'ի գործ դրեր է, և կը հաստատէ թէ ձեր մի միայն դիմաց երևոյթն իրեն հաճեր է.

Կլեանդոս. Ուզած տասն և հինգ հազար ֆրանգս պիտի ըստանա՞մ ։

Լա Ֆլէշ. Այո, բայց քանի մը պայմաններով որ պէտք էք ընդունիլ՝ թէ որ միտք ունիք որ գործը լմննայ ․

Կլեանդոս. Փոխատուին հետ քեզի խօսիլ տուա՞ւ ․

Լա Ֆլէշ. Ահ, ճշմարիտ. աս մեր գիտցած գործքերէն չէ. փոխատուն ձեզմէ աւելի զինքը չի յայտնելու զգուշութիւն կ'ընէ. և ասոնք այնպէս մեծ գաղտնիքներ են որ դուք չէք կարծեր. Անունն իսկ անոր անունը չեն ուզեր ըսել. և այսօր ծանօթ տուն մը մէջ ձեզի հետ երես երեսի խօսակցելու են, որ ձեր բերնէն ձեր հարստութեանը և գերդաս

տանին վրայ տեղեկութիւն տանուն, երբեք չեմ տարակուսիր որ ձեր հօրը միակ անունը գործերը չդիւրացընէ :

Կլեանթոս. Անհաւանելի՞ որ մայրս մեռած ըլլալով, անոր հարստութիւնն ալ իմս է.

Լը Ֆլէշ. Ահա մանկ ըլէ սա մէկ քանի յօդուածները, զորս ինքը իր բերնովն ըսեր ու մեր միջնորդը գրեր է, որպէսզի բանի մը ձեռք զարնելէն առաջ, զանոնք անգամ մ'աչքէ անցընէք.

« Ենթադրելով թէ փոխատուն ամէն կերպ ապահովութիւնները տեսնէ, և թէ փոխառուն երեւելի, և անդորր գերդաստանէ մ' ըլլայ, որուն հարստութիւնն ընդարձակ, հաստատուն, ապահով, յայտնի, և ամէն փախնոցներէ ազատ ըլլայ, աղէկ և ճիշդ պարտամուրհակ մը կը շինուի խիստ հաւատարիմ նոտարի մը ձեռքովը, որն որ փոխատուէն պիտի ընտրուի, որովհետեւ աս բանիս համար, որ աս գործին լաւ սրբելն կարեւոր է իրեն : »

Կլեանթոս. Ասոր ըսելիք չկայ :

Լը Ֆլէշ. « Փոխատուն, որպէս զի խիղճը չբեռնաւորէ, կ'ուզէ որ ստակը հարիւրին հինգ շահով տայ : »

Կլեանթոս. Հարիւրին հինգ շահ. ինչ կ'ըսես. անոր վայելուչ գործը : Գանգատելու տեղ չկայ :

Լը Ֆլէշ. Իրաւ է :

« Բայց, ինչպէս որ յիշեալ փոխատուն պահանջուած գումարն իր քովը չունի, և թէ փոխառուին կամակատարելու համար, ստիպուած է ուրիշէ մը փոխ առնելու հարիւրին քսան վճարելու պայմանաւ, պէտք է որ յիշեալ առաջին փոխառուն աս շահը վճարէ առանց մնացեալին վնասելու, քանզի յիշեալ փոխատուն իրեն սիրոյ մ' ընելու համար միայն փոխ առնելու է ուրիշէն : »

Կլեանթոս. Աս ինչ դժնդակ բան է. ով Հրեայն, ով Արաբացին է ասդ. բաւդ հարիւրին քսանու հինգէն ալ աւելի է :

Լը Ֆլէշ. Իրաւ է. ես ալ այդպէս ըսի : Հիմա պիտի տեսնէք :

Կլեանթոս. Ինչ պիտի տեսնեմ. ես ստակի հարկաւորութիւն ունիմ. պէտք է ամէն բանին հաւանիմ :

Լը Ֆլէշ. Ես ալ այդպէս պատասխանեցի.

Կլեանթոս. Ասկէ զատ ուրիշ բան կա՞յ :

Լը Ֆլէշ. Փոքր յաւելուած մ'եւս միայն.

« Պահանջուած տասն և հինգ հազար ֆրանկէն փոխատուն պիտի կարենայ միայն տասն երկու հազար ֆրանկ ստակով տալ. և մնացածին տեղը պէտք է փոխառուն հանդերձներ, կարասիներ, ազնուազարդներ առնելու հաւանի, որոնց ցանկը հետեւեալն է, և յիշեալ փոխատուն անկեղծութեամբ կարելի եղածին չափ ցած գին դրած է անոնց վրայ : »

Կլեանթոս. Ինչ ըսել կ'ուզես :

Լը Ֆլէշ. Անոնց ցուցակը.

« Նախ և առաջ, անկողին մը չորս ոտքով, վրան ձիթապտղի գոյն ասուի մը, որուն ծայրերը Հունգարիայի ասղնագործ երիզներ կան. նոյնպէս վեց աթոռ և մէկ անկողնոյ նոյն ձեւ զարդարուած մետաքսի ծածկոց մը, ամէնն ալ իրենց կարմրագոյն եզրածոպերովը, և վրանին ոսկեգոյն մ'ալ աւելցուած է, որ կարմիր և մանիշակագոյն կապոյտ գոյնի կը փոխուի :

« Ասկէ զատ, առագաստ կախելու համար Օմալի չոր վարդի գոյն մետաքսեայ առագաստ մը, հետը մէկ փոքրիկ բարձ և մետաքսեայ ծոպեր (ծոպեր) : »

Կլեանթոս. Ինչ ընելու համար ասոնք ինծի տալ կ'ուզէ :

Լը Ֆլէշ. Սպասեցէք :

« Ասկէ զատ, վարագոյր մը, Գոմպոյի և Մաքէի սէրերը նկարուած :

« Ասկէ զատ, երկաթեայ ոտքերով կամ զարմանազարդ սիւներով ընկուզի փայտէ շինուած մեծ սեղան մը, որ երկու կողմէն ալ կը բացուի, և հետը իր վեց անկողնոյ աթոռակներովը : »

Կլեանթոս. Տէր Աստուած, ինչ պիտ'ընեմ ասոնք :

Լը Ֆլէշ. Քիչ մը համբերեցէք :

« Ասկէ զատ, մարգարտէ զարդարուած (Ակէնէֆ) զարդարուած երեք խոշոր պատուական հրացաններ, իրենց երեք պատուանդաններովը :

« Ասկէ զատ, Բերկամայի վէն մը, իր ամէն բաժակներովը :

« Ասկէ զատ, աղիւսէ շինուած վառարան մը երկու գնդաձեւ սրուակներով և երեք պղինձէ



անօթներով, որոնք սպառուեր են, բայց հետաքրքիր եզերներուն :

Կլեանթոս. Բարկութիւնս կը գրգռէ զիս :

Լը Ֆլէշ. Քիչ մը համբերեցէք :

« Ասկէ զատ, երեք անօթ խաղալու գործիքներ, որոնք հարկաւոր են պզտիկ մնացած ժամանակը զուարճութեան համար :

« Ասկէ զատ, երկու կէս ամբ մեծութեամբ չոր խոտով լեցուած մողէսի (ալիգատորի) մորթ մը, սենեակի մ'առաստաղէն կախելու համար խիստ հետաքրքրական բան մ'է :

Բոլոր ասոնք, որ առանց նեղացութեան չորս հազար հինգ հարիւր ֆրանկ կ'արժեն, փոխատուն իր կամքէն երեք հազար ֆրանկի իջեցուց : »

Կլեան. Փոխատուն ալ իր սրսչմունքներն ալ կրակը տանի. գող չէ՞, դահիճը. Երբեք այսպէս ահաւոր տոկոսիք լսուած բան է : Խնդրած տոկոսին շահէն գոհ չէ, ու զիս կը ստիպէ, որ երեք հազար ֆրանկի տեղ հին անպիտան բաներն ընդունիմ, որոնք ես վեցը հարիւր ֆրանկի չեմ ուզեր առնել. Բայց այսու ամենայնիւ պէտք է որ ուզածին հաւանիմ. ինչու որ ամէն բան ընդունել տալու իշխանութիւնը ձեռքն է. և այն անօրէնն իր դանակը կոկորդիս կը բռնէ :

Լը Ֆլէշ. Պարոն, կը տեսնեմ որ, Աստուած չընէ, ճիշդ Փանուրժին բռնած ճամբան կը բռնէք հարստութիւննիդ փճացնելու համար՝ ստակն առաջ առնելով, սուղ գնելով, աժան ծախելով, եկամուտն առնելէն առաջ ուտելով.

Կլեանթոս. Ինչ կ'ուզես որ ընեմ : Ահա այսպէս երիտասարդները, հայրերուն անիծեալ ագահութեան պատճառաւ, թշուառութեան մէջ են. աս զարմանալի տակաւին կը զարմանան ամէն մարդիկ թէ զաւակներին անոնց մեռնիլը կ'ուզեն .

Լը Ֆլէշ. Պէտք է խոստովանիլ որ ձեր հօրը ագահութիւնն անտանելի է որ խիստ զգաստ մարդն անգամ գլուխ կը հանէ . Փառք Աստուծոյ, ես աս դժնդակ խնարհութիւնը [?] չունիմ. գիտեմ իմ ընկերներէս զինքս անվնաս պահել, երբ անոնք իրենց անկրկիւղութեամբը փոքր առեւտուրներու մէջ կը խառնուին և պատժոյ արժանի մեղանչական գործքեր կը գործեն. Բայց, ձեզ ճշմարիտն ըսեմ, ես ձեր տեղն ըլլայի՝ իր աս ընութիւններէն զզուելով իրմէ բան գողնալու պիտի ջանայի, և կարծեմ թէ գողնալով արժանի գործ մ' ըրած կ'ըլլայի :

Կլեանթոս. Տուր ինծի այդ ցուցակը, որ անգամ մ' ես ալ տեսնեմ զան :

## ՏԵՍԱՐԱՆ Բ.

Հարպակոն. Մէթր Սիմոն. Կլեանթոս և Լը Ֆլէշ (ետեւին կեցած)

Մէթր Սիմոն. Այո, պարոն, երիտասարդ մ' է որ ստակի հարկաւորութիւն ունի. իր գործքերն ըստակ գտնելու կ'ըստիպեն զինքը. և ինչ որ սահմանէք՝ պիտի ընդունի.

Հարպակոն. Բայց կը կարծես, Մէթր Սիմոն, որ ամենևին վտանգի երկիւղ չկայ. և ըսած մարդուդ անունը, ինչքը, և ընտանիքը գիտես.

Մէթր Սիմոն. Ոչ, չեմ կրնար ճիշդ տեղեկութիւն մը տալ ձեզ, իմ իրեն հանդիպելս դիպուածով մը

եղաւ. բայց դուք իմէն աւելի բան կ'իմանաք, և իր երեսէն զիս ազատեցէք որ դուք շատ գոհ պիտի ըլլաք՝ երբ ճանչնաք զայն. Այնչափ աս կրնամ ըսել որ իր ընտանիքը խիստ հարուստ է, որ արդէն մայր չունի, և կը բաղձայ որ իր հայրն ալ շուտով մեռնի.

Հարփակոն. Զարմանալի բան մ'է աս, Ընկերութիւնը, Մէթր Սիմոն, կը պարտաւորէ զմեզ որ կրցած ատեննիս մարդոց կամքը կատարենք.

Մէթր Սիմոն. Այդպէս պէտք է ըլլալ։

Լա Ֆլէշ (կամաց մը Կլէանդրին, Մէթր Սիմոնը ճանչնալով). Ինչ կը նշանակէ աս։ Մէթր Սիմոնը հօրդ հետ ինչ կը խօսի.

Կլէանդր (կամաց մը Լա Ֆլէշին). Ով ըլլալս իմացուցի՞ն արդեօք անոր. արդեօք զիս պիտի մատնե՞ս դուն։

Մէթր Սիմոն (Կլէանդրին և Լա Ֆլէշին). Օ, օ. ինչպէս կ'արտորաք. ով ըսաւ ձեզ թէ մենք հոս ենք. (Հարփակոնին) Մի կարծէք, պարոն, որ ձեր անունը և բնակարանն ես իմացուցած ըլլամ ասոնց. Բայց իմ գիտցածս փնաս մը չունի. ասոնք հանճարեղ մարդիկ են, և կրնաք հոս անոնց հետ գործ տեսնել.

Հարփակոն. Ինչպէս։

Մէթր Սիմոն. (Կլէանդրը ցուցնելով). Այս պարոնն է ձեզի խօսեցած տղան և հինգ հազար ֆրանք փոխ ուզողը։

Հարփակոն. Ինչ, անզգամ, դուն ես որ այս մեղապարտ թշուառութեանց կու տաս ինքզինքդ։

Կլէանդր. Ինչ, հայր իմ. դուք էք որ աս ամօթալի գործերուն տուեր էք ինքզինքնիդ.

(Մէթր Սիմոն կը փախչի, և Լա Ֆլէշ կը պահուըտի)

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀԱՐՓԱԿՈՆ. ԿԼԷԱՆԴՐ

Հարփակոն. Դո՞ւն ես որ այսպէս դատապարտելի փոխառութեամբ կ'ուզես տունս փճել.

Կլէանդր. Դո՞ւք էք որ այսպէս անգութ անիրաւ տոկոսքներով կը ջանաք զձեզ հարստացնել.

Հարփակոն. Ինչ երես կը համարձակիս առջևս երևնալու.

Կլէանդր. Ինչ երես կը համարձակիք հասարակաց առջև երևնալու.

Հարփակոն. Ըսէ ինծի, չես ամչնար որ այդպէս զեխութեանց կու տաս ինքզինքդ. տռփալի ծախքերու մէջ կ'իյնաս, և քու ծնողացդ այնչափ քրտինքով ժողուած հարստութիւնը ամօթալի կերպով կը փճանես.

Կլէանդր. Չէք ամչնար երբէք որ այդպէս աս տուրքերով պատւինիդ կը կորսնէք. ոսկի ոսկւոյ վրայ դիզելու անյագ բաղձանքով ձեր բոլոր փառքը և համբաւը կը զոհէք, ու խիստ երևելի անիրաւ վաշխառուներէն հնարուած մանրամասն անգութ շահերով ինքզինքնիդ կը հարստացնէք։

Հարփակոն. Կորի՛ր աչքիս առջևէն, անզգամ, կորի՛ր աչքիս առջևէն.

Կլէանդր. Ձեր կարծեօք՝ ո՞վ աւելի յանցաւոր է. պէտք ունեցող ստակ փոխառնողը, թէ պէտք չունեցող ստակ գողցողը.

92206



... ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ... Публичная Библиотека 7/XI 1922 ИМЕНИ А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Հարփակոն. Կորի՛ր ասկէ, կ'ըսեմ, և բարկութիւնս մի գրգռեր։ (Առանձին) Աս գիպուածիս վրայ չեմ ցաւիր. ինչու որ ասիկայ ինծի խրատ մ'է որ իր ամէն գործքերուն վրայ առաջուանէ աւելի աչքս չորս բանամ։

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՖՐՈԶԻՆԱ, ՀԱՐՓԱԿՈՆ

Ֆրոզինա. Պարոն։

Հարփակոն. Սպասէ քիչ մը. հիմա կու գամ քեզի հետ կը խօսինք։ (Առանձին) Յարմար ատեն է որ երթամ անգամ մը ստակս նայիմ։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԼԱ ՖԼԷՇ. ՖՐՈԶԻՆԱ

Լա Ֆլէշ. (առանց Ֆրոզինան տեսնելու). Ճշմարիտը, շատ ծաղրաշարժ գիպուած է աս։ Անշուշտ աս մարդը ընդարձակ նկուղի մը մէջ բան պահած է. ինչու որ մեր ունեցած ցուցակին մէջ նշանակուածներէն բան մը չտեսանք։

Ֆրոզինա. Հէ՛, դուն ես, իմ խեղճ Լա Ֆլէշս։ Ինչպէս եղաւ որ իրարու պատահեցանք։

Լա Ֆլէշ. Ա՛, հա՛, դուն ես Ֆրոզինա։ Ինչ գործ ունիս հոս։

Ֆրոզինա. Ինչ որ ամէն ուրիշ տեղ կ'ընեմ, այսինքն ամէնուն կը ծառայեմ, ասոր անոր գործին միջնորդութիւն կ'ընեմ, և կրցածիս չափ իմ ունեցած քիչ մը խելքովս գործերը կը յաջողցնեմ։ Գիտես որ աս աշխարհիս մէջ պէտք է աչքաբացութեամբ ապրիլ, և ինծի պէս մարդոց Աստուած հնարքներէն և ճարպիկութիւններէն ուրիշ բան տըւած չէ։

Լա Ֆլէշ. Աս տանը տիրոջ հետ առուտուր մ'ունիս։

Ֆրոզինա. Այո. փոքրիկ գործի մը համար իրեն միջնորդութիւն կ'ընեմ, ուրկից վարձք մը կը յուսամ։

Լա Ֆլէշ. Անկէ՞. ա՛հ, ճշմարիտ կ'ըսեմ, շատ խորամանկ ըլլալ պէտք ես որ անորմէ բան մը փրցընես, և քեզ կ'իմացընեմ որ ստակ ըսած բանդ հոս խիստ սուղ է։

Ֆրոզինա. Այնպէս ծառայութիւններ կան, որ զարմանալի կերպով անոր սիրտը կը շարժեն։

Լա Ֆլէշ. Ծառայ եմ, դուն տակաւին պարոն Հարփակոնը չես ճանչնար։ Պարոն Հարփակոնը ամէն մարդկանց մէջ խիստ անգութ մարդն է, բոլոր մահկանացուաց մահկանացուն, ամէնէն քարասիրտը և ամէնէն կծծին։ Ամենևին ծառայութիւն մը չկայ որ իր երախտագիտութիւնը շարժէ զինքը որ իր ձեռքը բանայ որ բան մը տայ։ Գովութիւն, յարգանք, խօսքով մարդասիրութիւն, և բարեկամութիւն, ուզածիդ չափ կը գտնես քովը. բայց երբ ստակի խօսք ընես, ալ իրեն հետ գործ չունիս։ Իր շնորհակալութիւններէն և բարեկամական սիրոյ նշաններէն ուրիշ աւելի չոր և աւելի ցամաք բան չունի. և տալ բառէն այնպէս զզուած է, որ բնաւ չգործածեր. այնպէս որ Ողջոյն տամ, չըսեր, այլ Ողջոյն փոխ տամ.

Ֆրոզինա. Հէ՛. ես աղէկ գիտեմ մարդիկներուն հետ վարուելու ուսումը. գութերնին շարժելու

տերնին զուարճացընելու, և այնպէս ճամբաներ գտնելու վարպետ եմ, որ անոնց զգացութիւնը կը շարժեմ։

Լա Ֆլէշ. Աս տեղ այդ անպիտան հնարքները չեն անցնիր։ Անանկ չեմ կրնար հաւատալ որ դուն այդ մարդուն սիրտը սակի կողմանէ շարժես։ Աս մասին անզգայ է, բայց այնպէս կերպով մը որ ամէն մարդ կը յուսահատեցընէ։ Մէկ խօսքով, սակը՝ համբաւէն, պատիւէն և առաքինութենէն աւելի կը սիրէ. և սակ ուզողին ներկայութիւնը իր ջիղերը կը սարսեցընէ։ Աս բանս իրեն մահացու հարուածով զարնել, սիրտը ծակել, և ընդերքը դուրս հանել է. և եթէ... բայց ահա նորէն կուգայ, պէտք է որ երթամ։

## ՏԵՍԱՐԱՆ Զ.

### ՀԱՐՓԱԿՈՆ, ՖՐՈՁԻՆԱ

Հարփակոն. (ցած ձայնով). Ամէն բան ուզածիս պէս յաջող կ'երթայ։ (Բարձր ձայնով) Ի՞նչ լուր, Ֆրոզինա։

Ֆրոզինա. Ա՛հ, ինչպէս առողջ կը տեսնեմ զձեզ, և ինչպէս զուարթ դէմք մ'ունիք։

Հարփակոն. Ո՞վ, ես։

Ֆրոզինա. Երբեք այդպէս պայծառ և զուարթագին գոյն մը տեսած չէի երեսնուդ վրայ։

Հարփակոն. Իրա՞ւ կ'ըսես։

Ֆրոզինա. Ի՛նչ կըսէք, ձեր կենացը մէջ հիմակուան պէս առոյգ ...դէմք մ'ունեցած չէք. ես քսան և ... տարեկան մարդիկ կը տեսնեմ ...ղմէ աւելի ծեր կ'երևին։

Հարփակոն. Սակայն, Ֆրոզինա, ճիշդ վաթսուննոց եմ ես։

Ֆրոզինա. Է՛, ինչ կայ. վաթսուն տարին շատ է։ Վաթսուն տարին մարդուս ծաղիկ հասակն է. և հիմա գարնան գեղեցիկ եղանակը կը մտնէք։

Հարփակոն. Իրաւ է. բայց եթէ ասկէ քսան տարեկան պակաս ըլլայի գէշ չէր ըլլար, կարծեմ։

Ֆրոզինա. Կատակի համար կը խօսիք։ Դուք ատոր հարկաւորութիւն չունիք, և ձեր մարմնոյ կազմուածքը կը ցուցանէ թէ հարիւր տարի ապրելու էք։

Հարփակոն. Կը կարծես։

Ֆրոզինա. Ճշմարիտ կ'ըսեմ, աս բանիս ամէն նշանները ունիք վրանիդ։ Կեցիք քիչ մը. ո՛հ, ահա ճիշդ երկու աչքերնուդ մէջ երկար ապրելու նշան մը կը տեսնեմ։

Հարփակոն. Ասկէ կը ճանչնաս։

Ֆրոզինա. Անտարակոյս։ Ձեռքերնիդ ինծի ցուցուցէք. ո՛հ, Տէր Աստուած, աս ինչ կենաց գիծ է։

Հարփակոն. Ինչպէս։

Ֆրոզինա. Չէ՞ք տեսներ, աս գիծը մինչև ուր կ'երթայ։

Հարփակոն. Է՛, ինչ կը նշանակէ։

Ֆրոզինա. Ես հարիւր տարի կ'ըսէի. բայց, ճշմարիտ կ'ըսեմ, հարիւր քսանն ալ պիտ'անցնիք։

Հարփակոն. Կարելի՞ է արդեօք։

Ֆրոզինա. Չափազանց ապրելու էք, կ'ըսեմ. զաւակներնիդ և զաւակներնուդ զաւակները պիտի թաղէք։

Հարփակոն. Ասկէ աղէկ ինչ կ'ու-



զեմ։ Գործերնիս ինչպէս եղաւ։

Ֆրոզինա. Հարցընել պէ՞տք է, և երբէք տեսեր էք որ ձեռք զարկած գործս չյաջողցընեմ։ Ամուսնութեանց համար մանաւորաբար հրաշալի տաղանդ մ'ունիմ։ Աշխարհի մէջ չկայ տեղ մ'այնպէս երկու սիրահարեալներ, որոնք քիչ ժամանակի մէջ միջոց մը չգտնեմ միաւորելու։ Անտարակոյս աս մեր գործոյն մէջ մեծ դժուարութիւններ չկար։ Ինչպէս որ առևտրական գործքերու համար անոնց տունը կը մտնեմ կ'ելլեմ, թէ մօրը և թէ աղջկանը երկուքնուն մէկտեղ ձեր վրայօքը խօսեցայ, և Մարիանային փողոցէն անցնելու և պատուհանին մէջ նստած ատենը տեսնելնիդ՝ ձեր անոր համար ունեցած որոշմունքը իմացուցի մօրը։

Հարփակոն. Ո՞վ պատասխան տուաւ։

Ֆրոզինա. Մայրը ուրախութեամբ առաջարկութիւննիդ ընդունեց. և երբ իմացուցի անոր թէ շատ կը բաղձաք որ այս իրիկուն ամուսնութեան պայմանագիրը կատարուելու ժամանակը աղջիկը ներկայ գտնուի, առանց դժուարութեան հաւանութիւն տուաւ։

Հարփակոն. Պարոն Անսէլմը աս իրիկուն հացկերոյթի հրաւիրելու պարտաւորուած եմ, Ֆրոզինա, և շատ ուրախ պիտ' ըլլամ եթէ ան ալ կոչունքին ներկայ ըլլայ։

Ֆրոզինա. Իրաւունք ունիք։ Ճաշէն ետև աղջկանդ այցելութեան պիտի գայ, անկէ միտք ունի վաճառանոցը երթալու, ետքն ալ ընթրելու պիտի գայ։

Հարփակոն. Շատ աղէկ, թող իմ փոխ տուած կառքովս մէկտեղ երթան։

Ֆրոզինա. Շատ աղէկ կ'ըլլայ։

Հարփակոն. Բայց, Ֆրոզինա, իր աղջկանը հետ տալու օժտին վրայօք խօսեցա՞ր մօրը։ Ըսի՞ր անոր թէ պէտք է որ քիչ մ'օգնէ, ջանայ, և այսպէս առթի մը համար սակ հանճարէ. ինչու որ եկամուտ չունեցող աղջիկ մը չեն կարգեր։

Ֆրոզինա. Ի՞նչ. աս աղջիկը տասն'երկու հազար ֆրանգ եկամուտ ունի։

Հարփակոն. Տասն'երկու հազար ֆրանգ եկամո՞ւտ։

Ֆրոզինա. Այո՛։ Ասկէ զատ՝ նախ և առաջ խիստ խնայութեամբ սնած և մեծցած է. միայն աղցանով, կաթով, պանիրով և խնձորով ապրելու սորված է, և հետևաբար անոր համադամ հացկերոյթներ, աղէկ եփուած ընտիր կերակուրներ, կեղևը հանուած գարի, և ամէն կանանց պէս՝ ամէն տեսակ փափկութիւններ պէտք չեն. գիտէք որ աս բաները քիչով չեն ըլլար, տարին առ նուազն երեք հազար ֆրանգի կը հասնի։ Ասկէ զատ, անիկա թուղթ խաղալէն սոսկալի կերպով զզուած է, որ այս օրուան օրս կանանց հասարակ է. որոնց մէջէն ես մը դրացուհիներէն մէկը կը ճանչնամ որ այս տարուան մէջ երեսուն և քառասունի խաղալով քսան հազար ֆրանգ կորոնցուց։ Բայց անոր միայն քառորդը առնենք, տարին հինգ հազար ֆրանգ թղթի, չորս հազար ֆրանգ լաթի և գոհարներու, ամէնը մէկէն ինը հազար ֆր-

բանդ կ՚ընէ. և հազար ոսկի ալ ուտելիքի համար դնենք, չէ որ տարին տասն՚երկու հազար ֆրանք պիտի շահիք ։

Հարփակոն. Այո՛, այդ գէշ բան չէ. բայց ըրած հաշիւդ ալ արդարացի չէ ։

Ֆրոզինա. Ներեցէք. ամուսնութեան օժտին տեղ ուտելու խմելու զգաստութենէ, պարզութիւն և վայելչութիւն սիրող, և թուղթ խաղալէն զզուող կին մ՚առնելէն աւելի ինչ արդարացի բան կայ ։

Հարփակոն. Իր օժիտը անոր չընելու ծախքերուն ինձ հաստատել ուզելդ ծաղու արժանի է ։ Չառած բանիս ինչպէս առի ըսեմ. անշուշտ պէտք է որ ձեռքս բան մ՚անցնի ։

Ֆրոզինա. Ի՞նչ կ՚ըսէք. բաւական բան պիտ՚առնուք. ըսին նաև ինձ թէ այս ինչ քաղաքը ստացուածք ունին, որոնք ձերը պիտի ըլլան ։

Հարփակոն. Տեսնենք ինչ բան է։ Բայց, Ֆրոզինա, ուրիշ բան մ՚ալ կայ որ զիս կը տրտմեցընէ ։ Ինչպէս որ տեսար, աղջիկը առոյգ է, և երիտասարդները սովորաբար իրենց նմանները կը սիրեն, և իրենց ընկերները կը փնտռեն միայն ։ Կը վախնամ որ ես աս հասակս անոր ախորժակին համաձայն չգամ, և չըլլայ թէ աս բանը տանս մէջ անկարգութիւններ ընելու պատճառ ըլլայ, որ իմ գործիս չգար ։

Ֆրոզինա. Ա՜հ, զինքը աղէկ ճանչցած չէք ։ Աս ալ մասնաւոր պարագայ մ՚էր որ կ՚ուզէի ըսել ձեզ ։ Ամէն երիտասարդներէն չափազանց կերպով զզուած է, և ծերերը միայն կը սիրէ ։

Հարփակոն. Մարիանա՞ն ։

Ֆրոզինա. Այո՛, Մարիանան. կ՚ուզէի որ այս բանիս վրայ անոր խօսիլը լսէիք ։ Երիտասարդ մը տեսնելով ամենևին չկրնար համբերել. բայց երբ փառաւոր մօրուօք գեղեցիկ ծերունի մը տեսնէ, կ՚ըսէ, անկէ աւելի մեծ ուրախութիւն մը չկրնար զգալ ։ Որչափ ծեր ըլլայ, իրեն այնչափ սիրելի է. և կ՚իմացընեմ ձեզ որ չըլլայ թէ երթաք ինքզինքնիդ մատաղացընելու ջանաք։ Կ՚ուզէ որ մէկը գոնէ վաթսնամեայ ըլլայ. դեռ չորս ամիս չկայ, կարգուելու ատենը՝ ամուսնութիւնը բոլորովին ետ ըրաւ, պատճառելով որ իր ամուսինը յիսուն և վեց տարեկան ըլլալը իմացեր, և պայմանագիրը ստորագրելու համար ամենևին ակնոց չգործածեր էր ։

Հարփակոն. Ա՞ս բանիս համար միայն ։

Ֆրոզինա. Այո՛, կ՚ըսէ թէ ինքը յիսուն և վեցը տարեկան մարդէ գոհ չէ. ալ աւելի քթին վրայ ակնոց կրողներուն վրայ է աչքը ։

Հարփակոն. Ճշմարիտ, նորալուր բան մը կ՚ըսես ինձ ։

Ֆրոզինա. Ուրիշ այնչափ բաներ կան որ անկարելի է ըսելը. սենեկին մէջ քանի մը նկարներ և պատկերներ քաշուած կը տեսնուին ։ Բայց ինչ պատկեր կը կարծէք որ ըլլան. Ադոնիսնե՞ր, Կեփաղոսնե՞ր, Փարիսնե՞ր, և Ապողոննե՞ր ։ — Ո՛չ. այլ Սատուրնոսի, Պրիամոս թագաւորին, ծերունի Նեստորին, և իր որդւոյն ուսոցը վրայ բարի Անգիսին գեղեցիկ պատկերները նկարուած են ։



Հարփակոն. Աս սքանչելի բան է ։ Ահա աս բանս ամենևին մտքէս անցած չէր. և շատ ուրախ եմ որ անկա այսպէս բնութեան տէր է ։ Յիրաւի եթէ ես կին ըլլայի՝ երբեք երիտասարդները սիրելու չէի ։

Ֆրոզինա. Իրաւունք ունիք ։ Տեսէք հիմա ինչ յարգ ունին երիտասարդները ։ Անպարկեշտ և քծնող կնիկներն են որ անոնց վրայ սէր կը ձգեն. բայց չեմ գիտեր թէ ինչ հաճոյական բան մը կը տեսնեն անոնց վրայ ։

Հարփակոն. Ասոր իմ խելքս չհասնիր, և չեմ գիտեր թէ ինչպէս անանկ կանայք կը գտնուին, որոնք այնչափ կը սիրեն զանոնք ։

Ֆրոզինա. Պէտք է յետին աստիճանի խենդ ըլլայ մէկը որ աս բանս ընէ ։ Երիտասարդութիւնը սիրելը կատարեալ մտաց արդասի՞ք են ։ Ան տարփաւոր երիտասարդներն ալ մա՞րդ են, և կրնա՞յ մէկը այս անասուններուն ընկերանալ ։

Հարփակոն. Ես ալ ամէն օր նոյն բանը կ՚ըսեմ ։ Անոնց վառեակի ձայնը, կատուի մօրուքին նման երեք փոքր թել մօրուքնին, խծուծի պէս կեղծ ծամերնին, և կախուած վարտիքնին, և բաց լանջերնին. . .

Ֆրոզինա. Ասոնց հակառակը կը տեսնեմ ձեր վրայ ։ Ձեզի պէս մարդուն պէտք է մարդ ըսել, որ տեսնալդ ալ արժէ գոնէ. և սիրելի ըլլալու համար այդպէս պէտք է հագուիլ ։

Հարփակոն. Հաւնեցա՞ր ինծի ։

Ֆրոզինա. Ի՛նչ. հրաշալի կ[...]ւիք, և դէմքերնիդ գծագրելու արժանի է ։ Դարձիք անգամ մը, թէ որ կը հաճիք ։ Ասկէ աւելի աղէկ չկրնար ըլլալ ։ Քալեցէք, տեսնեմ ։ Ահա, ինչպէս որ պէտք է, ձ[...]ւար, հաստատուն և կայտառ մարմին մը, որուն վրայ ամենևին հիւանդութիւն մը չտեսնուիր ։

Հարփակոն. Փա՛ռք Աստուծոյ, մեծ հիւանդութիւններ չունիմ. միայն իջուածք մ՚ունիմ, որ երբեմն կու գայ կ՚իջնայ ։

Ֆրոզինա. Բան մը չէ, իջուածքնիդ վնասակար չէ, և փա՛ռք Աստուծոյ, կը հազաք ։

Հարփակոն. Ըսէ ինծի, Մարիանան բնաւ զիս տեսած չէ՞ դեռ. իմ անցնելու ատենս ամենևին զիս չէ՞ դիտեր ։

Ֆրոզինա. Ո՛չ. բայց ձեր վրայօքը շատ խօսակցեցանք ։ Ես ձեր դիմացը գծագրութիւնը ըրի անոր, և չմոռցայ զձեզ գովել, և ձեզի պէս ամուսին մ՚ունենալուն օգուտը իմացընել ։

Հարփակոն. Աղէկ ըրիր, շնորհակալ եմ քեզի ։

Ֆրոզինա. Պարոն, ձեզի ընելու փոքր աղաչանք մ՚ունիմ ։ Քիչ մը ստակ չունենալուս համար՝ դատս կորսնցունելու եմ (Հարփակոն իր դէմքը կը խոժոռեցընէ). կրնաք դիւրութեամբ աս դատը շահեցընել ինծի՝ թէ որ բարերարութիւն մ՚ընէք. . . Չէք կրնար կարծել թէ ինչպէս Մարիանան զձեզ տեսնելով պիտի ուրախանայ ։ (Հարփակոն ուրախ դէմք մը կը ցուցընէ) Ա՜հ, ինչպէս սիրելի երեւնալու էք անոր, ինչպէս անոր

…ացը սքանչելի ազդուութիւն մ'ընելու է ատ նախնեաց զգեստը։ Բայց ամէն բանէն առաջ՝ ժապաւէններով բաճկոննուդ կապուած վարտիքներուդ վրայ պիտի հիանայ, խնլէքը պիտի թողնէ, և այդպէս զարդարուած սիրահար մը չափազանց սիրելի ըլլալու է։

Հարփակոն. Ճշմարիտ, այդպէս խօսելով զիս կը հիացընես։

Ֆրոզինա. Յիրաւի, պարոն, աս դատին վերջը խիստ դէշ պիտի ըլլայ ինձ։ (Հարփակոն խոր դէմքը կը խոժոռցնէ) Թէ որ կորսնցընեմ զան՝ յետին թշուառութեան մէջ պիտի իյնամ. ձեր քիչ մ'օգնութիւնը զիս ամէն վտանգէ պիտի ազատէ.... Ձեր վրայօքը խօսելու ատեննիս՝ անոր զգացած ուրախութիւնը կ'ուզէի որ տեսնէիք։ (Հարփակոն ուրախ դէմք մը կը ցուցնէ) Ձեր յատկութիւնները մի առ մի պատմելու ատենս՝ անոր աչացը մէջ ուրախութեան կայծը կը շողար. այնպէս որ աս ամուսնութեան բոլորովին կատարուիլը տեսնելու վերջին անհամբերութեան մէջ թողուցի զան։

Հարփակոն. Շատ ուրախացուցիր զիս, Ֆրոզինա. և յիրաւի կ'ըսեմ, չափազանց շնորհակալ եմ։

Ֆրոզինա. Կ'աղաչեմ, պարոն, պահանջած քիչ մ'օգնութիւնս տալու շնորհք ըրէք։ (Հարփակոն դարձեալ իր դէմքը կը խոժոռցնէ) Աս բանը զիս պիտի կենդանացընէ, և ես յաւիտեանս երախտապարտ պիտ'ըլլամ ձեզ։

Հարփակոն. Մնաս բարով, երթամ պատրաստութիւններս տեսնեմ։

Ֆրոզինա. Ճշմարիտ կ'ըսեմ, պարոն, որ ասկէ աւելի մեծ կարօտութեան մէջ չէիք կրնար օգնել ինձ։

Հարփակոն. Պիտի հրամայեմ որ կառքս պատրաստեն ու ձեզ վաճառանոցը տանին։

Ֆրոզինա. Եթէ սոսկալի չըլլայի՝ ձեզմէ օգնութիւն չէի խնդրեր։

Հարփակոն. Ու պիտի հոգ տանիմ որ կանուխ ընթրեն, որպէս զի ձեզ չհիւանդացընեն։

Ֆրոզինա. Ձեզմէ խնդրած շնորհքս մի մերժէք։ Չէք կրնար, պարոն, անոր ուրախութիւնը.....

Հարփակոն. Երթամ, աչա՛ զիս կը կանչեն։

Ֆրոզինա. (առանձին). Գա՛րշելի շունը, շունիկը տանի։ Ընդզան մ'ը կողմէն որ բռնեցի՝ ինքզինքը ազատեց։ Բայց պէտք չէ որ գործս թողում. ուրիշ միջոց մը ունիմ, ուրկից անշուշտ աղէկ վարձք մը առնելու կը յուսամ։

## ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՐՓԱԿՈՆ, ԿՂԵԱՆԴՐՈՍ, ԷԼԻԶԱ, ՎԱՂԵՐԻՈՍ, ՏԱՄ ՔԼՈՏ (աւել մը բռնած), ՄԷԹՐ ԺԱՔ, ՊՐԷՆՏԱՎՈՒԱՆ, ԼԱ ՄԵՐԼԻՒՇ

Հարփակոն. Ամէնքնիդ ալ հոս եկէք որ հրամաններս ամէն մէկերնուդ տամ, և ամէննուդ գործը կարգի դնեմ։ Հոս եկուր, Տամ Քլոտ, քեզմէ սկսինք։ Աղէկ, գործիքդ ալ ձեռքդ է։ Ամէն տեղ մաքրելու հոգ տար. և ամէն բանէ առաջ՝ նայէ որ կարասիքները այնչափ խիստ չշփես, որպէս զի չմաշին։ Ասկէ զատ՝ ընթրիքի ատեն շիշերուն կառավարութիւնը քեզի կը յանձնեմ. և թէ որ մէկ հատը պակսի կամ կոտրուի՝ քու վրադ կը հաշուեմ, ու տարեկանէդ վար կ'իջեցընեմ։



Մէթրը Ժագ. (առանձին) Քաղաքական պատիժ։

Հարփակոն. (Տամ Քլոտին) Գնա՛։

### ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՀԱՐՓԱԿՈՆ, ԿՂԵԱՆԴՐՈՍ, ԷԼԻԶԱ, ՎԱՂԵՐԻՈՍ, ՄԷԹՐ ԺԱՔ, ՊՐԷՆՏԱՎՈՒԱՆ, ԼԱ ՄԵՐԼԻՒՇ

Հարփակոն. Դուն, Պրէնտավուան, ու դուն, Լա Մէրլիւշ, բաժակները լուալու, և սեղանին վրայ զանոնք լեցընելու հոգ տարէք, բայց ան ատենը միայն՝ երբ ծարաւութիւն ունենան, և ոչ այնպէս անզգամ սպասաւորաց սովորութեանը համեմատ, որոնք զմարդիկը կը գրգռեն, և անոնց միտքերնէն չանցած ատենը կ'իմացընեն որ խմեն։ Մէկ անգամ ուզելով մի տաք, ըսպասեցէք որ շատ անգամ ուզեն, և միտքերնիդ ըլլայ որ միշտ ջուրը շատ դնէք։

Մէթրը Ժագ. (առանձին) Այո՛, անապակ գինին գլուխը կը զարնէ։

Լա Մէրլիւշ. Զխազարմանութեան կրկնոցը պիտի հանե՞նք, պարոն։

Հարփակոն. Այո՛, երբ տեսնէք որ հիւրերը կուգան. և նայեցէք որ զգեստնիդ չաղտոտէք։

Պրէնտավուան. Պարոն, դուք աղէկ գիտէք. որ իմ բաճկոնիս առջեւը ճրագի եղէն եղած մեծ արատ մը կայ։

Լա Մէրլիւշ. Պարո՛ն, իմ բաճկոնիս ետեւն ալ ծակ ծակ է, տեսէք, ակնածութեամբ խօսելու...

Հարփակոն. (Լա Մէրլիւշին) Լո՛ւռ կեցիր, վարպետութեամբ մ'ան կողմը պատին դարձուր, և միշտ դէմքըդ ժողովրդոց ըրէ։ (Պրէնտավուանին՝ ցուցնելով անոր թէ ինչպէս պէտք է իր գլխարկը բռնելով առջեւը դնել եղին աղտեղութիւնը ծածկելու համար) Դուն ալ, հիւրերդ միշտ այսպէս դիր կերակուրները սեղանին վրայ դնելու ատենդ։

### ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀԱՐՓԱԿՈՆ, ԿՂԵԱՆԴՐՈՍ, ԷԼԻԶԱ, ՎԱՂԵՐԻՈՍ, ՄԷԹՐ ԺԱՔ

Հարփակոն. Իսկ դուն, աղջիկս, սեղանէն վերցուած կերակուրներուն հոգ տանիս. նայէ որ վնաս մը չըլլայ. աս բանը աղջկանց կը վայելէ։ Բայց սակայն պատրաստուէ իմ տիկինս պատուելու, որ պիտի գայ քեզ այցելութիւն ընէ, և զքեզ իր հետը վաճառանոցը տանի։ Իմացա՞ծներս կը լսե՞ս։

Էլիզա. Այո՛, հայր իմ.

### ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՀԱՐՓԱԿՈՆ, ԿՂԵԱՆԴՐՈՍ, ՎԱՂԵՐԻՈՍ, ՄԷԹՐ ԺԱՔ

Հարփակոն. Դուն ալ, իմ քըծնող տղաս, որուն ասկէ քիչ մը առաջ եղած անցքը կը բարեհաճիմ ներելու, չըլլայ թէ պաղութեամբ վարուիս անոր հետ։

Կղեանդրոս. Ե՞ս, հայր իմ, ես պաղութեամբ վարուիմ, բայց ինչ պատճառաւ։

Հարփակոն. Ի՜հ, յայտնի է թէ ինչպէս կը վարուին այն զաւակները, որոնց հայրերը վերստին կը

կարգուին, և թէ ինչ աչքով իրենց մօրուին նայելու սովորութիւն ունին։ Բայց թէ որ կը բաղձաս որ վերջին լրբութիւնդ մոռնամ, կը հրամայեմ քեզի ամէն բանէ առաջ որ այն անձը պատուով մեծարես, և վերջապէս կրցածիդ չափ յարգութեամբ ընդունելութիւն ընես։

Կլէանդրոս. Շնորհակալ ըսեմ, հայր իմ. չեմ կրնար ամենեին ուրախանալ որ ան իմ մօրուս պիտի ըլլայ. սուտ պիտի խօսիմ՝ թէ որ այսպէս ըսելու ըլլամ. Բայց զինքը աղէկ պատուելու և հետը պաղութեամբ չվարուելու համար, կը խոստանամ որ աս մասին ճշգիւ պիտի հնազանդիմ ձեզ։

Հարփակոն. Գոնէ աս բանին հոգ տար։

Կլէանդրոս. Պիտի տեսնէք որ բոլորովին ձեր կամքը պիտի կատարեմ։

Հարփակոն. Խելացիութիւն պիտի ընես։

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ՀԱՐՓԱԿՈՆ. ՎԱԼԵՐԻՈՍ. ՄԷԹՐ ԺԱԳ.

Հարփակոն. Վալերիոս, օգնէ ինծի հիմա։ Եկու նայինք, Մէթր Ժագ, մօտ եկու. քեզի ամէնէն վերջը թողուցի։

Մէթր Ժագ. Որու՞ն կ'ուզէք խօսիլ, պարոն, ձեր կառավարին թէ խոհարարին, որովհետև երկու պաշտօնն ալ ունիմ։

Հարփակոն. Երկուքին ալ.

Մէթր Ժագ. Բայց երկուքէն որու՞ն առաջ խօսելու էք։

Հարփակոն. Խոհարարին։

Մէթր Ժագ. Սպասեցէք ուրեմն թէ որ կը հաճիք։

Մէթր Ժագ խոհարարի զգեստը կը հանէ. և կառավարի զգեստով կու գայ։

Հարփակոն. Աս ինչ նորաձև սովորութիւն է։

Մէթր Ժագ. Հրամայեցէք, պարոն, ձեզի մտադիր եմ։

Հարփակոն. Աս գիշեր, Մէթր Ժագ, միտք ունիմ կոչունք մ'ընելու։

Մէթր Ժագ. (առանձին) Մեծ հրաշք։

Հարփակոն. Ըսէ նախ, մեզի աղէկ կերակուրներ եփելու ես։

Մէթր Ժագ. Թէ որ ինծի շատ ստակ տաք՝ ինչու՞ չէ։

Հարփակոն. Ի՞նչ դէշ բան է աս. միշտ ստակ կ'ուզես. կարծես թէ ուրիշ խօսք չկայ. ստակ, ստակ. Ահ, աս բառը միայն բերաննէն կը լսուի. ստակ։ Միշտ ստակ կ'ըսեն. Աս է միայն իրենց առաջին զէնքը. ստակ։

Վալերիոս. Ասկէ աւելի անճոռնի պատասխան մը տեսած չեմ։ Աս ալ հրաշք բան մ'է որ աղէկ կերակուրներ եփելու համար շատ ստակ կ'ուզեն. ասկէ աւելի դիւրին ինչ բան կայ, և մարդ որչափ տխմարամիտ ըլլայ՝ կրնայ շատ ստակով աղէկ գործ տեսնել. բայց վարպետ մարդը պէտք է քիչ ստակով աղէկ կերակուրներ եփէ։

Մէթր Ժագ. Ինչպէս. քիչ ստակով աղէկ կերակուր։

Վալերիոս. Այո։

Մէթր Ժագ. (Վալերիոսին) Շնորհակալ կ'ըսեմ, պարոն տեսուչ, շատ շնորհակալ պիտի ըլլանք եթէ



այդ ճամբան մեզի ցուցընես, և իմ խոհարարութեան պաշտօնս վրադ առնուս, որպէս զի ան ատենը տանը ամեն գործքին մէջ կարենաս խառնուիլ։

Հարփակոն. Լաւ է։ Ի՞նչ կերակուր պէտք է։

Մէթր Ժագ. Քանի՞ հոգի սեղան պիտի նստիք։

Հարփակոն. Ութը կամ տասը հոգի պիտ'ըլլանք. բայց դուն ութը հոգիի վրայ հաշուէ. երբ ութը հոգիի կերակուր կայ, տասը հոգիի ալ կայ։

Վալերիոս. Այո, այնպէս է։

Մէթր Ժագ. Շատ աղէկ. չորս մեծ սկուտեղ խառնամթան պէտք է և հինգ տեսակ կերակուր։ Խառնամթան... նախամթան...

Հարփակոն. Խենդեցար. բոլոր քաղաք մը կերակրելու չափ կերակո՞ւր պիտ'եփես։

Մէթր Ժագ. Թանէն ետև վայլած խորովիկներ...

Հարփակոն (ձեռքը Մէթր Ժագին բերանին վրայ դնելով). Ահ, անզգամ, տունս փլելու՞ ելեր ես։

Մէթր Ժագ. Աղանդերէն առաջ կերակրեղէններ...

Հարփակոն (նորէն իր ձեռքը Մէթր Ժագին բերանին վրայ դնելով). Տակաւին կը խօսի՞ս։

Վալերիոս (Մէթր Ժագին). Ինչ, կ'ուզես որ ամեն մարդ ճաթեցընե՞ս, և միթէ պարոնը կերակուրներով մարդ մեռցընելու՞ համար սեղան կը պատրաստէ։ Գնա՛ անգամ մ' առողջութեան կանոնները կարդա, և բժիշկներուն հարցուր թէ չափազանց ուտելէն աւելի ինչ վնասակար բան կայ մարդուս։

Հարփակոն. Իրաւունք ունի։

Վալերիոս. Սորվէ, Մէթր Ժագ, և քու նմաններուդ սորվեցուր թէ շատ մտալից սեղան մ'առողջութեան վնասակար է. հրաւիրեալներուն սիրելի ըլլալու համար՝ պէտք է որ կերակուրները քիչ ըլլան, և հին իմաստունի մը խօսքին համեմատ՝ Պէտք է ուտել ապրելու համար, և ոչ ապրիլ ուտելու համար։

Հարփակոն. Ահ, աս ինչ գեղեցիկ խօսք է։ Եկու քովս որ աս խօսքին համար գրկեմ։ Երբէք կենացս մէջ ասկէ աւելի իմաստուն խօսք մը լսած չէի. Պէտք է ապրիլ ուտելու համար, և ոչ ուտել ապր... Ոչ, այսպէս չէ. ինչպէս ըսիր, Վալերիոս։

Վալերիոս. Թէ պէտք է ուտել ապրելու համար, և ոչ ապրիլ ուտելու համար։

Հարփակոն (Մէթր Ժագին). Այո, կը լսե՞ս։ (Վալերիոսին) Ասիկա ո՞ր երևելի մարդուն խօսքն է։

Վալերիոս. Անունը հիմա միտքս չի գար։

Հարփակոն. Միտքդ ըլլայ՝ աս խօսքերը ինծի գրես. քանզի կ'ուզեմ սրահիս վառարանին վրայ ոսկի գրերով փորագրել զանոնք։

Վալերիոս. Գլխուս վրայ. և ընթրիքն ալ իմ վրաս ձգեցէք. ես ամեն բան պէտք եղածին պէս կը կարգադրեմ։

Մէթր Ժագ. Իմ ուզածս ալ աս է. աշխատութիւնս կը թեթևնայ։

Հարփակոն (Վալերիոսին). Պէտք է այնպէս կերակուրներ եփես որ շատ չեն ուտուիր և որոնք շուտ մը կը կշտացընեն. աղէկ թանձր լուբիա մը չինես, և շագանակ-

ներով եփուած խմորեղէններ ։

Վալերիոս. Անհո՛գ եղիք ։

Հարփակոն. Հիմա, Մէթր Ժագ, պէտք է որ կառքս մաքրես ։

Մէթր Ժագ. Սպասեցէք · աս խօսքը կառավարին կը նայի ։

(ՄԷԹՐ ԺԱԳ ԻՐ ԿԱՌԱՎԱՐԻ ՇԱՊԻԿԸ ԿԸ ՀԱԳՆԻ ՆՈՐԷՆ)

Ի՞նչ ըսիք ։

Հարփակոն. Թէ պէտք է որ կառքս մաքրես, և ձիերս պատրաստես վաճառատունս երթալու համար ։

Մէթր Ժագ. Ձիե՞րդ, պարոն, ճշմարիտ կ'ըսեմ, քալելու ոյժ չունին ։ Չըսեմ թէ չոր յարդի վրայ պառկեր հիւանդ են, քանզի խեղճ անասունները պառկելու համար անգամ յարդ չունին, որ շատ ցաւալի է խօսիլը ։ Այլ դուք այնչափ սաստիկ ծոմ պահել կու տաք անոնց, որ ալ ձիու կերպարանք չէ մնացեր վրանին, այլ կարծես թէ պատկեր մը, ուրուական մը, կամ ձիու օրինակ են ։

Հարփակոն. Հիւա՞նդ են կ'ըսես · բայց ամենևին գործ մ'ըրած չեն։

Մէթր Ժագ. Գործ մը չընելնուն համար, պարոն, միթէ ուտել պէտք չե՞ն ։ Աւելի աղէկ էր խեղճ անասուններուն որ շատ աշխատէին և բան մ'ուտէին ։ Այնպէս զանոնք ծիւրած մաշած տեսնելով՝ սիրտս կը մորմոքի · ինչու որ այնպէս գութ մ'ունիմ իմ ձիերուս վրայ, որ եթէ անոնց նեղութիւնը տեսնեմ, կը կարծեմ թէ ես եմ · ամէն օր իմ ուտելիքէս կ'աւելցընեմ և անոնց կու տամ · այդպէս գութ չունենալնիդ, պարոն, կը ցուցընէ որ դուք խիստ բնութիւն մ'ունիք ։

Հարփակոն. Մի՛ վախնար, մինչև վաճառատունը երթալով, ոտքերնին չկոտրիր ։

Մէթր Ժագ. Ո՛չ, պարոն, ես զանոնք տանելու սիրտ չունիմ, և խղճմտանքս չներեր որ զանոնք աս վիճակին մէջ մտրակեմ։ Ի՞նչպէս պիտի կարենան կառք մը քաշել, երբ իրենք զիրենք չեն կրնար քաշել ։

Վալերիոս. Պարոն, Փիգար դրացիին կ'աղաչեմ որ կառավարչութիւնը ան ընէ աս անգամ, նոյնպէս ընթրիքը պատրաստելու համար ալ անիկա հարկաւոր է ։

Մէթր Ժագ. Թող ըլլայ · աւելի կ'ուզեմ որ անոնք ուրիշի ձեռքով մեռնին քան թէ իմին ։

Վալերիոս. Մէթրը Ժագ աղէկ խրատուանք կը կարէ ։

Մէթր Ժագ. Պարոն տեսուչը տանը պէտքը աղէկ կը հոգայ ։

Հարփակոն. Զա՞յնդ կտրէ ։

Մէթր Ժագ. Պարոն, շողոքորթներուն չեմ կրնար համբերել, և կը տեսնեմ որ ասոր բոլոր ըրածները, այսինքն՝ միշտ տանը մէջ փնտռուած հացը, գինին, փայտը, աղը և վառելուքը գրի առնելը ուրիշ բանի համար չէ, բայց եթէ ձեր սիրտը շահելու և իր ուզածը ընելու ։ Աս բանիս վրայ ես շատ կը նեղանամ, և ամէն օր ձեր վրայօքը խօսքեր լսելով կը ցաւիմ · բայց որուն ձեզի կը մեղքընամ թէև սիրտս նեղացած է · և ձիերէս ետև ամենէն շատ ձեզի կը սիրեմ։

Հարփակոն. Կրնա՞մ գիտնալ, Մէթրը Ժագ, թէ ինծի համար ինչ



կ'ըսեն ։

Մէթր Ժագ. Այո՛, պարոն, թէ որ գիտնայի թէ աս բանը ձեզ պիտի չբարկացընէ ։

Հարփակոն. Ոչ, բնաւ։

Մէթր Ժագ. Ներեցէք ինծի · ես աղէկ գիտեմ որ պիտի բարկանաք ։

Հարփակոն. Բնաւ ամենևին · ասոր հակառակը՝ ինծի հաճութիւն մ'ըրած պիտ' ըլլաս · և շատ կ'ուզեմ իմանալ թէ ինծի համար ի՞նչ կ'ըսեն ։

Մէթր Ժագ. Պարոն, քանի որ կ'ուզէք, համարձակ կ'ըսեմ թէ ամէն տեղ ձեզ ծաղր կ'ընեն, ձեզի համար ամէն կողմէն կծու երգիծաբանական տեսակ տեսակ խօսքեր կը նետեն մեր վրայ · և ամէն մարդ ուրախութիւն մը կ'ըզգայ ձեր զգեստներուն վրայ խօսիլ և անդադար ձեր կծծութեանը պատմութիւնները ընել ։ Մէկը կ'ըսէ թէ մասնաւոր օրացոյցներ տպել կու տաք, որոնց մէջ, իւրաքանչիւր եղանակին երեք օր ծոմերը և նաւակատիքները կրկնել կու տաք և վեցը օր կ'ընէք, որպէս զի ձեր մարդիկներուն ծոմ պահել տալով անկէ շահ ընէք ։ Ուրիշ մը կ'ըսէ թէ միշտ ծառաներնուդ հետ կռիւ ընելու պատրաստ էք կաղանդչէքի կամ անոնց ձեր քովէն ելլելու տեն, որպէս զի պատճառ մը գտնէք անոնց բան մը չտալու ։ Մէկը կը պատմէ թէ ձեր դրացիին կատուն ոչխարի ազդրի աւելցուկ կտոր մ'ուտելուն համար դատաստան ընել տուեր էք · միւսը՝ թէ դուք ձեր ձիերուն վարսակը գիշերանց գողնալնուդ ատենը ձեզ բռնուեր են, և թէ ինծմէ առջի կառավարը մութ տեղը չեմ գիտեր ո՛րչափ գաւազան ծեծ է տուեր ձեզի, որուն վրայ դուք չուզեցիք բան մ'ըսել ինծ ։ Վերջապէս, կ'ուզէք որ ըսեմ, ո՛ւր որ երթայ մէկը՝ ձեր վրայօքը ծաղրական խօսքերէն ուրիշ բան չլսեր, դուք ամենուն առակն և կատակն եղած էք · և միշտ ագահ, կծու, բիրտ և վաշխառու անուններով կը յիշատակեն ըզձեզ ։

Հարփակոն (ՄԷԹՐԸ ԺԱԳԸ ԾԵԾԵԼՈՎ) · Անմիտ, սրիկայ, անզգամ, անամօթ մ'ես դուն ։

Մէթր Ժագ · Տեսա՞ք հիմա, ես գուշակած չէ՞ի, ինծի չուզեցիք հաւատալ ։ Ձեզի ես ըսեր էի թէ ճշմարիտը խօսելով պիտի բարկացընեմ զձեզ ։

Հարփակոն. Խօսելու կերպը սորվէ։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՄԱՐԻԱՆԱ · ՖՐՈԶԻՆԱ · ՄԷԹՐ ԺԱԳ ։

Ֆրոզինա. Գիտե՞ս, Մէթր Ժագ, թէ տէրդ տո՞ւնն է ։

Մէթր Ժագ. Այո՛, ստուգիւ հոն է · շատ աղէկ գիտեմ։

Ֆրոզինա. Գնա՛ ըսէ, կ'աղաչեմ, թէ մենք հոս ենք ։

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՄԱՐԻԱՆԱ, ՖՐՈԶԻՆԱ ։

Մարիանա. Ա՜հ, չես գիտեր, Ֆրոզինա, թէ ի՛նչպէս սիրտս անհանգարտ է ։ Ես ճշմարիտ կ'ըսեմ որ կը վախնամ անոր դէմքէն։

Ֆրոզինա. Բայց ինչո՞ւ, ի՛նչ է անհանգստութեանդ պատճառը։

Մարիանա. Ափսո՜ս, ինծի՞ կը հաւցընես. երբեք չես երեւակայեր այնպէս անձի մը չփոթութիւնը, որ պատրաստ է իր տանջանարանը տեսնելու :

Ֆրոզինա. Մի՛ կարծեր, Մարիանա, որ Հարփակոնը քեզի այդչափ նեղութիւն պատճառէ. կերպարանքէդ կը նայիմ որ ինծի խօսեցած երիտասարդ սիրահարդ միտքդ կու գայ :

Մարիանա. Այո՛, Ֆրոզինա. աս այնպէս բան մ'է որ չեմ կրնար պահել, և անոր մեզի ըրած այցելութիւնները, ճշմարիտ կ'ըսեմ, սրտիս մէջ ազդեցութիւն մ'ըրած են :

Ֆրոզինա. Բայց ով ըլլալը գիտցա՞ր :

Մարիանա. Ո՛չ, անոր ով ըլլալը չեմ գիտեր բնաւ. բայց գիտեմ որ սիրելու անձ մ'է. եթէ ընտրութիւնը իմ ձեռքս ըլլար, ամենէն վեր զան առնելու էի և պիտի չուզէի առնուլ այնպէս մէկը, որուն համար զինքս սոսկալի տանջանքի մէջ պիտի ձգեմ :

Ֆրոզինա. Օ՜, զարմանալի բան. բոլոր այս երիտասարդ սիրահարները հաճելի են, և իրենց ըրածը գեղեցիկ կ'երեւցընեն : Բայց անոնց մեծ մասը դատարկասուն և աղքատ են, աւելի աղէկ է որ շատ հարստութիւն ունեցող ծեր էրիկ մ'առնուս : Յիրաւի կ'ըսեմ, շատ մարդ բնածիս աղէկ խելքը տեղ չըներ, պէտք է այն ամուսնոյն հետ ունենալու քիչ մը տհաճութեն համբերել. բայց աս բանը շատ չտեւեր. և հաւտա՛ ինծի, իր մահը շուտով գալով, պիտի կարենաս աւելի սիրելի էրիկ մ'առնել, որով քու բաղձանքդ պիտի լցուի :

Մարիանա. Ո՜հ, գէշ բան է, Ֆրոզինա, երջանիկ ըլլալու համար մէկուն մեռնելուն բաղձալ կամ սպասել : Նա մահը մեր մըտաց խորհուրդներուն չնայիր :

Ֆրոզինա. Ի՛նչ, կատա՞կ է ըրածդ. անոր մեռնիլը մօտ է, և գիտցած ըլլաս որ երեք ամիս չանցած այրի մնալու ես : Ահա նոյն ինքն է որ կու գայ :

Մարիանա. Ա՜հ, Ֆրոզինա, աս ի՛նչ դէմք է.

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՀԱՐՓԱԿՈՆ. ՄԱՐԻԱՆԱ. ՖՐՈԶԻՆԱ.

Հարփակոն (Մարիանային). Մի՛ մեղադրեր զիս, սիրելիս, քովդ ակնոցներով գալուս համար : Գիտեմ որ գեղեցկութիւնդ ինքնին մարդուս աչքերը կը խտղէ, ինքնիրմէ յայտնի կ'երևի, և ակնոցի հարկաւորութիւն չկայ զան գիտնելու համար. բայց ինչպէս որ աստղները ակնոցով կը դիտեն, ես ալ կը հաստատեմ և կը վկայեմ որ դուն մէկ աստղ մ'ես, բայց այնպէս աստղ մը որ աստղոց աշխարհին մէջ գըտնուած աստղներուն ամենէն գեղեցիկն է : Ֆրոզինա, բան մը չպատասխաներ. կարծեմ թէ զիս տեսնելուն համար ամենեին ուրախացած չէ :

Ֆրոզինա (Հարփակոնին). Պատճառը ան է որ դեռ հիացած մնացած է. և աս ալ կայ որ աղջիկները իրենց սրտին զգացածը յայտնելու միշտ կ'ամչնան :

Հարփակոն (Ֆրոզինային). Իրաւունք ունիս : (Մարիանային) Ահա՛, սիրուն օրիորդ, աղջիկս քեզ բարևելու կու գայ :



ՏԵՍԱՐԱՆ Թ.

ՀԱՐՓԱԿՈՆ. ԷԼԻԶԱ. ՄԱՐԻԱՆԱ, ՖՐՈԶԻՆԱ.

Մարիանա. Ձեզի այցելութեան գալով, տիկին, իմ պարտքս կատարած կը համարիմ :

Էլիզա. Շատ աղէկ ըրիք, տիկին, և ես ձեզի պիտ'աղաչէի աս բանիս համար :

Հարփակոն. Կը տեսնես որ աղջիկս մեծ է. բայց գէշ խոտը միշտ կը մեծնայ :

Մարիանա (ցած ձայնով Ֆրոզինային). Աս ի՛նչ բիրտ մարդ է :

Հարփակոն (Ֆրոզինային). Ի՞նչ կ'ըսէ օրիորդը :

Ֆրոզինա. Կ'ըսէ թէ շատ հաւնած է ձեզի :

Հարփակոն. Մեծ պատիւ կ'ընէք ինծի, սիրասուն օրիորդ :

Մարիանա (Մէկուսի). Աս ի՛նչ անասուն է :

Հարփակոն. Շատ շնորհակալ եմ վրաս ունեցած սիրոյդ համար :

Մարիանա (Մէկուսի). Ալ չեմ կրնար համբերել :

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ՀԱՐՓԱԿՈՆ, ՄԱՐԻԱՆԱ. ԷԼԻԶԱ. ԿԼԷԱՆԴՐՈՍ. ՎԱԼԷՐԻՈՍ. ՖՐՈԶԻՆԱ. ՊՐԻՆՏԱՎՈՒԱՆ :

Հարփակոն. Ահա տղաս ալ որ ըզձեզ պատուելու կու գայ :

Մարիանա (ցած մը Ֆրոզինային). Ա՜հ, Ֆրոզինա, աս երիտասարդը ի՞նչպէս հոս գտնուեցաւ : Միշտ աս է որուն վրայօք քեզի խօսեցայ :

Ֆրոզինա (Մարիանային). Կեցիր նայինք, ի՛նչ պիտ' ըլլայ :

Հարփակոն. Կը տեսնեմ որ այսպէս մեծ զաւակներ ունենալուս վրայ կը զարմանաս. բայց քիչ ատենէն թէ՛ մէկէն և թէ մէկալէն պիտի բաժնուիմ :

Կլէանդրոս (Մարիանային). Տիկին, ճշմարիտը ըսեմ, մեր հոս իրարու հանդիպելը ամենեին միտքէս չէր անցներ, և չիտակը շատ զարմացայ երբ իր միտքը դրածը ինծի իմացուց :

Մարիանա. Ես ալ նոյն բանը կրնամ ըսել. զքեզ հոս տեսնելուս վրայ ես ալ քեզի պէս զարմանքի մէջ եմ, և երբեք չէի կարծեր որ այսպէս հոս իրարու հանդիպինք :

Կլէանդրոս. Իրաւ է, տիկին, որ հայրս ձեզմէ աւելի աղէկը չէր կրնար գտնել, և քեզի տեսնելս ինծի մեծ ուրախութիւն մ'է. բայց այսու ամենայնիւ չեմ կրնար ալ ըսել թէ քու իմ խորթ մայրս ըլլալուդ համար պիտ' ուրախանամ : Աստոյգ կ'ըսեմ, ինծի խիստ հակառակ է այնպէս մէկու մը պատիւ ընելը, և եթէ ինձ կը նայիս՝ քու պատւոյդ չեմ ձգեր որ այն անունը ունենաս : Աս խօսքերը մէկ քանիներուն ծանր պիտ'երևի, բայց ես հաւաստի եմ որ դուն իմ միտքս պիտի հասկընաս. այս ամուսնութիւնը, տիկին, գիտես որ իմ կամացս հակառակ է, և դուն իմ ով ըլլալս գիտնալով՝ չեմ կարծեր որ իմ շահուցս դէմ գործես. և վերջապէս կ'ուզեմ որ իմ միտքս բացարձակ յայտնեմ, եթէ աս ամուսնութիւնը ինձմէ կախեալ ըլլար՝ հօրս հը-

բամանովը զան եա ընելու էի ։

Հարփակոն . Ո՜ն ինչ անձանի պատուոյ խօսքեր են · աս ինչ կերպ յայտնի խոստովանութի՛ է ։

Մարիանա · Շիտակը խօսիմ՝ իմ զգացմունքս ալ բոլորովին համաձայն են · եթէ իմ քու խորթ մայրդ ըլլալս կամացդ հակառակ է, ես ալ նոյնպէս չեմ ուզեր որ դուն իմ խորթ զաւակս ըլլաս ։ Մի՛ կարծեր, կ'աղաչեմ, որ ես քեզի աս անհանգստութիւնը տալու համար աշխատիմ ։ Շատ պիտի ցաւէի եթէ քեզի անհաճութիւն մը տալու պատճառ ըլլայի, և եթէ մէկուն իշխանութեանը տակ ստիպուած չըլլայի, ճշմարիտ կ'ըսեմ որ երբեք զքեզ տրտմեցընող ամուսնութեանը պիտի չհաւանէի ։

Հարփակոն . Իրաւունք ունի օրիորդը, յիմար խօսքի մը պատասխանը այսպէս կ'ըլլայ ։ Կ'աղաչեմ, սիրելիս, ներեցէք որդւոյս յանդգնութեանը · տխմարմիտ և երիտասարդ մ'ըլլալուն համար տակաւին իր ըսած խօսքերուն հետևութիւնը չգիտեր ։

Մարիանա · Ստոյգ կ'ըսեմ որ բոլոր անոր ըսածները ամենևին ինծի չվիրաւորեցին, այլ ընդ հակառակն իր սրտին բուն զգացմունքները ինծի յայտնելով ուրախացուց զիս ։ Իր բերնէն այս տեսակ խօսք մը լսելով շատ գոհ եմ · եթէ ուրիշ կերպով խօսելու ըլլար, այնչափ պիտի չհաւանայի անոր ։

Հարփակոն . Ձեր կողմէն անիկա մեծ բարերարութիւն մ'է որ կը բարեհաճիք անոր սխալմանցը թողութիւն շնորհելու ։ Ժամանակը անոր խելքը գլուխը պիտի բերէ, և պիտի տեսնես որ իր սխալմունքը պիտի ճանչնայ, ու իր միտք պիտի փոխէ ։

Կլէանդր . Ոչ, հայր իմ, ամենևին չեմ կրնար իմ միտքս փոխել, և շատ կ'աղաչեմ տիկինը որ խօսքիս հաւատայ ։

Հարփակոն . Բայց նայէ ինչ անմտութիւն է ասոր ըրածը, դարձեալ իր խօսքը կը շարունակէ ։

Կլէանդր . Կ'ուզէք որ սիրտս բանամ ։

Հարփակոն . Դարձեալ կը կրկնես · միթէ աս խօսքը պիտի չգոցես ։

Կլէանդր . Շատ աղէկ · որովհետև կ'ուզէք որ ուրիշ կերպով խօսիմ, համարեա թէ, տիկին, ես իմ հօրս տեղը կը խօսիմ · Ճշմարիտ կ'ըսեմ որ աշխարհիս մէջ քեզմէ աւելի սիրուն բան չտեսայ, և չեմ գիտեր թէ ինչպէս քեզի սիրելի ըլլալու երջանկութիւնը ունեցեր եմ · քու ամուսինդ ըլլալու պատուանունը այնպէս մեծ պարծանք մը և ուրախութիւն մը կը համարիմ ինձ, զոր երկրիս ամենամեծ իշխանները չունին ։ Այո՛, տիկին, քեզի հետ միանալու բարօրութիւնը ինծի համար ամէն տեսակ հարստութենէ և ամէն բանէ վեր է ։ Ամէն ձեռքէս եկածը 'ի գործ պիտի դնեմ աս բանիս համար, և ինչ մեծ արգելքներ որ ըլլան . . .

Հարփակոն . Կամաց եկու, տղաս, թէ որ կը հաճիս ։

Կլէանդր . Ես աս խօսքերը ձեր կողմէն տիկնոջ կ'ըսեմ, հայր իմ ։

Հարփակոն . Ինչ ըսել կ'ուզես, միթէ ես իմ զգացմունքներս յայտնելու լեզու չունիմ, և քեզի պէս գործակալի մ'ինչ հարկաւորութիւն ունիմ ։ Ո՛, թողուներ տուէք մեզի ։

Ֆրոզինա · Ոչ, աւելի աղէկ է որ չնստած վաճառատունը երթանք, որպէս զի շուտով ետ դառնանք, և ան ատենը շատ ժամանակ կ'ունենանք խօսակցելու ։

Հարփակոն (Պրինտավօանին) . Գնա ըսէ՝ թող ձիերը կառքին կապեն ։

## ՏԵՍԱՐԱՆ ԺԱ ·

ՀԱՐՓԱԿՈՆ · ՄԱՐԻԱՆԱ · ԷԼԻԶԱ · ԿԼԷԱՆԴՐՈՍ · ՎԱԼԵՐԻՈՍ, ՖՐՈԶԻՆԱ ·

Հարփակոն (Մարիանային) . Կ'աղաչեմ ներեցէք, օրիորդ, որ մեկնելնէդ առաջ թեթև ընթրիք մը պատրաստելու խելք չըրի ։

Կլէանդր . Ես պատրաստեր եմ, հայր իմ · և քանի մը կողով Չինաստանի նարինջ, քաղցր կիտրոն, և շաքարեղէններ բերել տուի ձեր տեղը ։

Հարփակոն (ցած ձայնով Վալերիոսին) . Վալերիոս ։

Վալերիոս (Հարփակոնին) . Խելքը թռցուցեր է տղանիդ ։

Կլէանդր . Ինչ, հայր իմ, կը կարծէք որ ասոնք բաւական չեն · տիկինը ներողամիտ պիտ'ըլլայ աս բանիս՝ եթէ կը հաճի ։

Մարիանա . Ասոր բաները ինչ հարկաւոր էին ։

Կլէանդր . Տիկին, հօրս մատը եղած մատնիին ադամանդէն աւելի փառփռուն ադամանդ մը տեսած էիր ։

Մարիանա . Իրաւ է՝ շատ կը փայլի ։

Կլէանդր (մատնին հօրը մատէն հանելով Մարիանային տալով) . Պէտք է որ մօտէն նայիս ։

Մարիանա . Խիստ գեղեցիկ է, իրաւցընէ, և շատ լուսաւոր ։

Կլէանդր (չթողլով Մարիանային որ մատնին ետ տայ) . Ոչ, տիկին, ձեռքիդ շատ աղէկ վայլեց, ու հայրս քեզի պարգև կու տայ զան ։

Հարփակոն . Ե՞ս ։

Կլէանդր . Այնպէս չէ՞, հայր իմ, աս մատնին տիկնոջ չտա՞ք որ իբրև սիրոյ գրաւ մը պահէ ։

Հարփակոն (կամաց մ'իր որդւոյն) . Ի՞նչ կ'ըսես ։

Կլէանդր (Մարիանային) . Ինչ զարմանալի բան · ինծի նշան կ'ընէ որ քեզի ընդունիլ տամ զան ։

Մարիանա . Չեմ ուզեր երբեք . . .

Կլէանդր (Մարիանային) . Կատակ է ըրածդ · ան չուզեր ետ առնելու ։

Հարփակոն (առանձին) . Բարկութիւնս զիս կը դրդուէ ։

Մարիանա . Ծանրութիւն տալ չեմ ուզեր . . .

Կլէանդր (մէջ Մարիանային չթողլով որ մատնին ետ դարձնէ) . Չէ, կ'ըսեմ · աս բանը իր պատուոյն կը դպչի ։

Մարիանա . Կ'աղաչեմ ։

Կլէանդր . Ամենևին ։

Հարփակոն (առանձին) . Տէր Աստուած ։

Կլէանդր . Տես, չընդունելուդ համար մեղքի մէջ կը մնայ ։

Հարփակոն (կամաց մ'իր որդւոյն) . Ա՜հ, անզգամ ։

Կլէանդր (Մարիանային) . Կը տեսնես որ կը յուսահատի ։

Հարփակոն (կամաց մ'իր որդւոյն՝ սպառնալով) . Դահիճ ։

Կլէանդր . Հայր իմ, աս յանցանքը իմս չէ · կրցածիս չափ

աշխատեցայ , որպէս զի մատնին ընդունել տամ · բայց անիկա պինդգլուխ մէկն է ։

Հարփակոն (կամաց մ'իր որդւոյն բարկութեամբ) · Անօրէն ։

Կլէանդրոս . Պատճառն ա՛լ ըլլաս որ հայրս ինծի հետ կռիւ կ'ընէ ։

Հարփակոն (կամաց մ'իր որդւոյն նոյն սպառնալիքներով) . Անառակ ։

Կլէանդրոս (Մարիանային) · Պիտի հաւանեցնես զինքը ։ Կ'աղաչեմ , տիկին , աւելի դէմ մի՛ դներ ։

Ֆրոզինա (Մարիանային) · Տէր Աստուած , աս ի՛նչ խօսքեր են ։ Մատնին ընդունէ , տիկին , ինչու որ պարոնը այսպէս կ'ուզէ ։

Մարիանա (Հարփակոնին) · Ձեզ չբարկացնելու համար կ'ընդունիմ զայն , բայց ետքը ձեզի կը դարձնեմ ։

### ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ՀԱՐՓԱԿՈՆ , ՄԱՐԻԱՆԱ , ԷԼԻԶԱ , ԿԼԷԱՆԴՐՈՍ , ՎԱԼԵՐԻՈՍ , ՖՐՈԶԻՆԱ , ՊՐԷՆՏԱՎՈՒԱՆ .

Պրէնտավուան . Պարոն , մէկը եկեր ձեզի հետ խօսիլ կ'ուզէ ։

Հարփակոն . Ըսէ որ հիմա գործ ունիմ , ուրիշ անգամ թող գայ ։

Պրէնտավուան . Ստակ բերեր է կ'ըսէ ։

Հարփակոն (Մարիանային) . Ներողութիւն կը խնդրեմ , հիմա կը դառնամ ։

### ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

ՀԱՐՓԱԿՈՆ , ՄԱՐԻԱՆԱ , ԷԼԻԶԱ , ԿԼԷԱՆԴՐՈՍ , ՎԱԼԵՐԻՈՍ , ՖՐՈԶԻՆԱ , ԼԱ-ՄԷՐԼՈՒՇ .

Լա Մէրլուշ (վազելով ու Հարփակոնը գետինը ձգելով) · Պարոն . . .

Հարփակոն . Ահ , մեռայ ։

Կլէանդրոս . Մէկ տեղդ ցաւեցուցի՞ր , հայր իմ ։

Հարփակոն . Անզգամը իմ պարտապաններէն անշուշտ ստակ առած պիտ'ըլլայ որ այսպէս վազելով պարանոցս ցաւցուց ։

Վալերիոս (Հարփակոնին) · Հիմա կ'անցնի ։

Լա Մէրլուշ (Հարփակոնին) · Պարոն , թողութիւն կը խնդրեմ ձեզմէ , կը կարծէի թէ վազելովս աղէկ պիտ'ըլլամ ։

Հարփակոն . Ի՞նչ գործի համար եկար հոս , դահիճ ։

Լա Մէրլուշ . Եկայ ձեզի ըսելու թէ երկու ձիերնուդ պայտերը ելած են ։

Հարփակոն · Թող իսկոյն պայտարին տանին ։

Կլէանդրոս · Մինչև ձիերուն պայտերը զարնուիլը , հայր իմ , ես երթամ ձեր տեղը տանը մեծաւորքներն ընեմ , և տիկինը պարտէզը տանիմ , ու նախընթրիքը հոն բերել տամ ։

### ՏԵՍԱՐԱՆ ԺԴ.

ՀԱՐՓԱԿՈՆ , ՎԱԼԵՐԻՈՍ .

Հարփակոն . Վալերիոս , աս ամէն բաներուն դուն հոգ տար , և կ'աղաչեմ , աշխատէ որ ինծի սուղի չնստի ։

Վալերիոս . Հոգ մ'ընէք ։

Հարփակոն (առանձին) . Ով անզգամ զաւակ , պիտի աղքատացնե՞ս զիս ։



## ԱՐԱՐՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԿԼԷԱՆԴՐՈՍ , ՄԱՐԻԱՆԱ , ԷԼԻԶԱ , ՖՐՈԶԻՆԱ .

Կլէանդրոս , Եկէք հոսէն հոս մտնանք , հոս աւելի աղէկ է · հիմա ալ կասկածելու մէկը չունինք քովերնիս , և պիտի կրնանք համարձակ խօսիլ ։

Էլիզա . Այո՛ , տիկին , եղբայրս ձեր վրայ ունեցած սէրը ինծի իմացուց ։ Աստուծ ձեր գործոյն առջևը ելած արգելքները տեսնելով , շատոնց սիրտս չափազանց կը ցաւի ։

Մարիանա . Ձեզի պէս անձ մը մեզի ցաւակից տեսնելը քաղցր մխիթարութիւն մ'է ինծի · և կ'աղաչեմ ձեզի , տիկին , որ միշտ այդ ազնիւ սէրը իմ վրաս ունենաք , որն որ բաղդին անգթութիւնները քաղցրացընելու կարող է ։

Ֆրոզինա . Ճշմարիտը , երկուքնիդ ալ խելք չունիք որ առաջուց գործերնիդ ինծի չիմացուցիք ։ Անտարակոյս , ես ձեզի աս անհանգստութեն պիտ'ազատէի , և գործքերը այս աստիճանին չէին համներ , ինչպէս որ կը տեսնէք ։

Կլէանդրոս . Ես ի՞նչ ընեմ · իմ չար բաղդս ասանկ ուզեց ։ Բայց , սիրուն Մարիանա , դուն ի՞նչ որոշած ես ։

Մարիանա . Ափսոս · ի՞նչ որոշումներ պիտի կարենամ ընել · ես որ մէկէ մը կախում ունիմ , ինծմէն ուրիշ ի՞նչ բան կրնամ ունենալ ։

Կլէանդրոս . Ինծի համար սրտիդ մէջ սոսկ իղձէն ուրիշ նեցուկ չկա՞յ , ընաւ մարդասէր գութ մը չունի՞ս , երբէք ձեռնտու բարեբարութիւն մը , և ոչ գործունեայ սէր ։

Մարիանա . Ի՞նչ ըսեմ · տեղս եղիր , ու տես թէ ի՞նչ կրնամ ընել ։ Ինծի խորհուրդ տուր ու հրամայէ , և ես կը հնազանդիմ քեզ ։ Եթէ խել այն ամէն ակնածութիւնները , որ մեր սեռը կը պարտաւորի ունենալ , զոհելու ըլլամ , դարձեալ մայր մ'ունիմ , որմէ պէտք եմ ակնածել ։ Անիկա միշտ զիս խիստ մեծ սիրով մեծցուցած է · ես չեմ ուզեր անոր ցաւ մը պատճառել ։ Դուն կրցածդ ըրէ , ու անոր սիրտը շահելու համար ամէն ջանքերդ 'ի գործ դիր ։ Ուզածդ կրնաս ընել և ըսել , ես քեզի հրաման կու տամ · և՛ եթէ բանը զինքս քեզի համար անոր յայտնել է , սիրով կը հաւանիմ քեզի համար բոլոր զգացած սէրս անոր խոստովանելու ։

Կլէանդրոս . Ֆրոզինա , աշխոյժ Ֆրոզինա , մեզի պիտ'օգնե՞ս ։

Ֆրոզինա . Ի՛նչ , ատ ալ հարցընելու բան է · ինչու չէ ։ Գիտէք որ ես մէկ մարդասէր բնութիւն մ'ունիմ · Աստուած իմ սիրտս պղնձէ չըրաւ · և երբ կը տեսնեմ որ երկու անձեր մէկզմէկ կը սիրեն , շատ սիրով կ'ուզեմ անոնց փոքր ծառայութիւններ ընելու ։ Սոր ինչ ճար կրնայինք գտնել արդեօք ։

Կլէանդրոս . Մտածէ քիչ մը , կ'աղաչեմ ։

Մարիանա . Մեզի հնարքներ սորվեցուր ։

Էլիզա. Ինչպէս հնարք մը գըտնիր որ առաջուան շինածդ աւրես։

Ֆրոզինա. Աս քիչ մը դժուար բան է։ (Մարիանային) Մայրդ բոլորովին իրաւունք մտիկ չընող կին մը չէ. և գուցէ դիւրաւ անոր սիրտը կը շահինք և միտքը կ՚ընենք որ հօրը ընելու պարգևը որդւոյն ընէ։ (Կլէանդրին) Սակայն դըժբաղդութիւնը ան է որ հայրդ քու հայրդ է։

Կլէանդրոս. Այո, այնպէս է։

Ֆրոզինա. Կ՚ուզեմ ըսել որ եթէ զինքը չընդունելնին ցուցընէն՝ պիտի բարկանայ, և հետևաբար ձեր ամուսնութեանը հաւանութիւն պիտի չտայ։ Ուստի պէտք է որ իր կողմէն ըլլայ չուզելը, և հնարքով մը ջանալու է որ ձեզմէ սիրտը պաղի։

Կլէանդրոս. Իրաւունք ունիս։

Ֆրոզինա. Այո, իրաւունք ունիմ, ես ալ գիտեմ. բայց դըժուարութիւնը հոս է. դարմանին միջոցներ կրնայ գտնել . . . Կեցէք, թէ որ տարէց և ինծի պէս խելացի կին մ՚ըլլար, որ ինքզինքը ազնուական տիկին մը ձևացընէր, և ես անոր համար Ստորին Բրիտանիայէն եկած մարքիզուհի կամ Թերակոմսուհի է ըսելով, յաջողութեամբ կրնայի հօրդ հաւատացընել թէ հարուստ տիկին մը, որ իր ստացուածքներէն զատ՝ հարիւր հազար ոսկի պատրաստ դրամ ունի, իրեն այնչափ տարփմամբ սիրահարած է, և այնչափ կը բաղձայ իրեն հետ կարգուիլ, որ իր բոլոր ունեցածը ամուսնութեան պայմանագըրով անոր պիտի տայ. ամենևին տարակոյս չունիմ որ աս առաջարկութեան ականջ կախէ։ Վասն զի գիտեմ որ ձեր վրայ շատ սէր ունի. բայց ձեզմէ աւելի դրամը կը սիրէ. և երբ աս խաբէութեամբ իր միտքը յափշտակուած անգամ մը ձեր գործին հաւանի, հոգ երնիս չէ երբ մարքեզուհիին գործքերուն սուտ ըլլալը և իր խաբուիլը իմանայ։

Կլէանդրոս. Շատ աղէկ մտածեցիր։

Ֆրոզինա. Ձեր գործը իմ վրաս թողուցէք. հիմա միտքս եկաւ որ իմ բարեկամուհիներէս մէկը աս գործին պիտի յարմարի։

Կլէանդրոս. Գիտցիր, Ֆրոզինա, որ երախտեօքդ պիտի ճանչնամ, թէ որ գործքերնիս յաջողի. Բայց, սիրասուն Մարիանա, կ՚աղաչեմ, նախ և առաջ քու մօրդ սիրտը շահինք. միշտ աս ամուսնութիւնը ետ ընելը դիւրին բան է։ Դուն քու կողմէդ ձեռքէդ եկած ամէն ջանքդ ՚ի գործ դիր. անոր քու վրադ ունեցած սէրը քեզի առիթ բանէ. ու քու պերճախօսութեւդ և սրտաշարժ խօսքերովդ անոր միտքը բռնէ։

Մարիանա. Բոլոր կրցածս կ՚ընեմ, և բան մը պիտի չմոռնամ։

### ՏԵՍԱՐԱՆ Բ.

ՀԱՐՓԱԿՈՆ. ԿԼԷԱՆԴՐՈՍ. ՄԱՐԻԱՆԱ. ԷԼԻԶԱ. ՖՐՈԶԻՆԱ.

Հարփակոն (Ինքնիրեն՝ առանց տեսնուելու). Ի՞նչ կը տեսնեմ. տըղաս Մարիանային ձեռքը կը պագնէ, և ան ալ ձեռքը չքաշեր։ Ասոր տակը գաղտնիք բան մը պիտ՚ըլլայ։

Էլիզա. Ահա հայրս։



Հարփակոն. Կառքը պատրաստ կ՚ըսպասէ. երբ որ կ՚ուզէք՝ կըրնաք հեծնել։

Կլէանդրոս. Քանի որ ուրեմն անոնց հետ երթալ չէք ուզեր, հայր իմ, ես տանիմ զանոնք։

Հարփակոն. Ոչ, դուն հոս կեցիր. անոնք կրնան մինակ երթալ, դուն ինծի պէտք ես.

### ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀԱՐՓԱԿՈՆ. ԿԼԷԱՆԴՐՈՍ.

Հարփակոն. Հոս եկուր. ըսէ միայն թէ Մարիանային վրայօք ինչ կը կարծես։

Կլէանդրոս. Ի՞նչ կը կարծեմ։

Հարփակոն. Այո. անոր կերպարանքին, հասակին, գեղեցկութեանը և մտացը վրայ։

Կլէանդրոս. Աղէկ։

Հարփակոն. Ճշմարիտը ըսէ։

Կլէանդրոս. Ձեզի համարձակ խօսիմ, կարծածիս պէս չգտայ զան. Կերպարանքը շըլխտի է, հասակը տգեղ, գեղեցկութիւնը խիստ չափաւոր, և միտքը թանձր։ Մի՛ կարծէք, հայր, որ ձեր սիրտը անորմէ պաղեցընելու համար կը խօսիմ. վասն զի որու հետ որ կարգուիք՝ միշտ իմ մայրս ըլլալու է. աս ալ միւսներուն պէս կը սիրեմ։

Հարփակոն. Հիմա անոր կ՚ըսէիր թէ . . .

Կլէանդրոս. Ձեր կողմէն քանի մը քաղցրաբանութիւններ ըրի անոր. բայց կարծեցի թէ աս բանըս ձեզի հաճոյ պիտ՚ ըլլայ։

Հարփակոն. Ուրեմն դուն անոր սիրահարած չես։

Կլէանդրոս. Ե՞ս, բնաւ։

Հարփակոն. Կը ցաւիմ. ինչու որ աս բանը միտքս դրած որոշմունքըս կը խափանէ. Մարիանան հոս եղած ատենը՝ իմ հասակիս վրայ մտածեցի և ինքնիրենս ըսի որ ետևէս պիտի խօսին, երբ այսպէս երիտասարդ աղջկան մը հետ կարգուիլս տեսնեն։ Աս մտածումը իմ միտքս փոխեց. բայց զան ուզելուս և անոր խօսք տալուս համար, քեզի պիտի տայի, թէ որ քու անորմէ զզուիլդ չիմանայի։

Կլէանդրոս. Ինծի՞։

Հարփակոն. Քեզի։

Կլէանդրոս. Կարգուելո՞ւ համար։

Հարփակոն. Այո, կարգուելու համար։

Կլէանդրոս. Մտիկ ըրէք. իրաւցընէ խիստ ուզածս չէ. բայց ձեր կամքը կատարելու համար, կը հաւանիմ անոր հետ կարգուելու։

Հարփակոն. Ես շատ աղէկ միտքըս դրեր եմ. բայց չեմ ուզեր որ զան բռնի սիրես։

Կլէանդրոս. Ո՛չ, ես ձեզի համար աս բանիս պիտի հաւանիմ։

Հարփակոն. Ո՛չ, ո՛չ. ամուսնութիւն մը չկրնար երջանիկ ըլլալ, երբ սէր չկայ։

Կլէանդրոս. Սէրը այնպէս բան մ՚է որ ետքն ալ կրնայ գալ. և կ՚ըսեն թէ սէրը շատ անգամ ամուսնութեան պտուղն է։

Հարփակոն. Ո՛չ, մարդս պէտք չէ բնաւ իր գլուխը կշիռի տակ դընել. աս բանիս չար հետևութիւններէն վախնալով, կ՚ըզգուշանամ աս գործը ընելէն։ Երանի՛ թէ անոր վրայ հակամիտութիւն մ՚ըզգացած ըլլայիր. իմ տեղս քեզի կը կարգէի անոր հետ. բայց այս բանս չըլլալուն համար՝

իմ առաջին միտքս 'ի գործ պիտի դնեմ, և ես անոր հետ պիտի կարգուիմ:

Կլէանդոս. Ատ որտեղ, հայր, միտքերնիդ այդպէս դրեր էք, պէտք եմ իմ սիրտս ձեզի բանալ, և գաղտնիքս ձեզի յայտնել: Ճշմարիտը ան է՝ որ պտըտելու ելած ատենը զինքը տեսած օրէս 'ի վեր կը սիրեմ զան. իմ միտքս քիչ մ'առաջ ձեզմէ զան կնութեան ուզել էր, և միայն ձեր որոշմունքը իմանալս և զձեզ բարկացընելու վախս ինծի արգելք եղան:

Հարփակոն. Անոր այցելութեան գացի՞ր:

Կլէանդոս. Այո, հայր իմ:

Հարփակոն. Շատ անգամ:

Կլէանդոս. Ժամանակը որչափ որ ներեց:

Հարփակոն. Քեզի աղէկ ընդունելութիւն տուի՞ն:

Կլէանդոս. Խիստ աղէկ. բայց իմ ով ըլլալս չէին գիտեր, ան էր պատճառը որ ատկէ քիչ մ'առաջ Մարիանան զիս հոն տեսնելուն համար զարմացաւ:

Հարփակոն. Քու սէրդ և միտքդ անոր յայտնեցի՞ր թէ կ'ուզես հետը կարգուիլ:

Կլէանդոս. Անշուշտ. մինչև անգամ իր մօրը քիչ մը բացի:

Հարփակոն. Իր աղջկան համար ըրած առաջարկութիդ մտիկ ըրա՞ւ:

Կլէանդոս. Այո, խիստ քաղաքավարութեամբ:

Հարփակոն. Իսկ աղջիկը քու սիրոյդ կը պատասխանէ:

Կլէանդոս. Թէև որ ըրած գործքերուն հաւատալ պէտք եմ, ճշմարիտ կ'ըսեմ, հայր իմ, խիստ մեծ սէր ունի իմ վրաս:

Հարփակոն. (կամաց մ'ինքնիրեն) Շատ ուրախ եմ այսպէս գաղտնիք մը իմանալուս. իմ ուզածս ալ աս էր: (Բարձր ձայնով) Գիտե՞ս ինչ կայ, տղաս. պէտք է որ սէրէդ հրաժարիս, ինծի առնելու աղջկանս ետևէն իյնալէդ ետ կենաս, և քեզի տալու աղջկան հետ քիչ ժամանակէն կարգուիս, եթէ կը հաճիս:

Կլէանդոս. Ի՛նչ, հայր, այսպէս զիս կը խաբե՞ս: Շատ աղէկ, որովհետև գործերը աս աստիճանի հասան, ճշմարիտ կ'ըսեմ որ Մարիանային վրայ ունեցած սէրըս երբէք պիտի չթողում. ամեն տեսակ նեղութիւնները պիտի քաշեմ, ու անոր հետ կարգուելու համար ձեզի հետ պիտի կռուիմ. եթէ դուք միայն անոր մօրը հաւանութիւնը ունիք, ես ուրիշ միջոցներ պիտ'ունենամ, որոնք իմ տեղս պիտի կռուին:

Հարփակոն. Գա՛րշելի, ի՛նչ համարձակութեամբ ինծի կը հակառակիս:

Կլէանդոս. Դուք ինծի կը հակառակիք. ես ձեզմէ առաջ կը սիրէի զան:

Հարփակոն. Ես քու հայրդ չեմ, և պէտք չե՞ս ինձմէ ակնածել:

Կլէանդոս. Ասանք այնպէս գործքեր չեն, որ տղաքները պարտաւորին իրենց հարցը խօսքը մտիկ ընել. սէրը մէկը չճանչնար:

Հարփակոն. Ես աղէկ կը ճանչցընեմ քեզի գաւազանով:

Կլէանդոս. Ձեր ամեն սպառնալիքները չեն կրնար վախցընել զիս:

Հարփակոն. Մարիանան պիտի թողուս:



Կլէանդոս. Ամենևին:

Հարփակոն. Շուտով գաւազան մը տուէք ինծի:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՀԱՐՓԱԿՈՆ. ԿԼԷԱՆԴՈՍ. ՄԷԹՐ ԺԱԳ.

Մէթր Ժագ. Հէ՜, հէ՜, հէ՜, աս ինչ է, պարոններ. միտքերնիդ ինչ է:

Կլէանդոս. Ես ատկէ չեմ վախնար:

Մէթր Ժագ (Կլէանդոսին). Ա՛, պարոն, կամաց:

Հարփակոն. Այսպէս յանդգնութեամբ ինծի հետ խօսի:

Մէթր Ժագ (Հարփակոնին). Պարոն, կ'աղաչեմ:

Կլէանդոս. Երբէք միտքս պիտի չփոխեմ:

Մէթր Ժագ (Կլէանդոսին). Ի՛նչ, հօ՞րդ այդպէս:

Հարփակոն. Թո՛ղ տուր ինծի:

Մէթր Ժագ (Հարփակոնին). Ի՛նչ, տղո՞ւդ այդպէս. ինծի շնորհք ըրէք:

Հարփակոն. Մէթր Ժագ, կ'ուզեմ որ աս գործին դատաւոր ըլլաս իմ իրաւունք ունենալս յայտնի ըլլալու համար:

Մէթր Ժագ. Խիստ աղէկ: (Կլէանդոսին) Դուք հեռացէք քիչ մը:

Հարփակոն. Աղջիկ մը կը սիրեմ, որու հետ կ'ուզեմ կարգուիլ. բայց աս աներեսը կը յանդգնի ինծի հակառակ զան սիրել, և իմ հրամաններուս ականջ չկախելով չուզեր իր միտքը փոխել:

Մէթր Ժագ. Յիրաւի յանցաւոր է:

Հարփակոն. Օտարական մ'իր հօրը հակառակի՜, աս ինչ սոսկալի բան է. պէտք չէ՞ որ ինձմէ ակնածէ, ու իմ սիրահարիս չդպչի:

Մէթր Ժագ. Իրաւունք ունիք: Ձգեցէք ինծի որ ես խօսիմ անոր հետ, և դուք հոն կեցէք:

Կլէանդոս (Մէթր Ժագին, որ իրեն կը մօտենայ). Այո, որովհետև հայրս գքեզ դատաւոր ընտրեց, ես ալ ամենևին դէմ չեմ կենար ատոր. ով որ ըլլայ՝ թող ըլլայ, հոգս չէ. մեր վէճին մէջ, Մէթր Ժագ, յօժարակամ կը հաւանիմ որ դուն մեր դատաւորն ըլլաս:

Մէթր Ժագ. Աս խիստ մեծ պատիւ է ինծի:

Կլէանդոս. Երիտասարդ աղջկան մը սիրահարած եմ, որ ան ալ իմ սիրոյս կը պատասխանէ, և իմ սիրոյ պարգևներս սիրով կ'ընդունի. հայրս ալ անոր հետ կարգուիլ ուզելով, մեր սէրը կ'աշխատի խափանել:

Մէթր Ժագ. Ստուգիւ հայրերնիդ յանցաւոր է:

Կլէանդոս. Չամչնա՞ր երբէք որ իր աս հասակին մէջ կարգուելու է ելեր: Կը վայլէ՞ իրեն որ տակաւին սիրահարի, և պէտք չէ՞ որ աս գործը երիտասարդներուն թողու:

Մէթր Ժագ. Իրաւունք ունիք. ան ըրածը չգիտեր: Թողուցէք ինծի որ ես անոր երկու խօսք ըսեմ: (Հարփակոնին) Ի՛նչ կ'ըսէք. որդինիդ ըսածնուդ պէս անկարգ չէ, իր խելքը գլուխը ժողվեր է: Կ'ըսէ թէ ձեր պատիւը կը ճանչնայ, և միայն բարկութենէ շարժեալ այնպէս վարուեր է. ձեր կամացը հնազանդելու բնաւ դէմ պիտի չդնէ, միայն թէ իր

հետը աղէկ վարուիք, և այնպէս անձի մը հետ զինքը ամուսնացընէք, որմէ ինքը գոհ ըլլայ։

Հարփակոն. Իրաւ կ'ըսես, Մէթր Ժագ, բայց անոր ըսէ ուրեմն որ եթէ այսպէս վարուի, ամէն բան կրնայ ինձմէ յուսալ, և Մարիանայէն զատ՝ կը թողում զինքը որ համարձակ ուզած աղջիկը ընտրէ։

Մէթր Ժագ. Դուք ինծի թողուցէք, ես կը չխօսիմ։ (Կլէանդոսին) Հայրերնիդ ձեզի պէս բոլորովին իրաւունքը մտիկ ընող չէ. ինծի ըսաւ որ ձեր բարկութիւնը զինքն ալ բարկացուցեր է. հիմա կ'ուզէ որ ուզածնուդ պէս ձեզի հետ վարուի, և ուզածնիդ ձեզի տայ, եթէ դուք ալ անոր հետ քաղցրութեամբ վարուիք, և որդւոյ մ'իր հօրը պարտաւորած մեծարանքը, ակնածութիւնները և հնազանդութիւնները ընէք։

Կլէանդոս. Իրաւ է ըսածդ, Մէթր Ժագ, կրնաս հայրս ապահովցընել որ եթէ Մարիանան ինծի տայ՝ միշտ խիստ հնազանդ ըլլալու եմ իրեն, և երբէք իր կամքէն դուրս բան պիտի չընեմ։

Մէթր Ժագ (Հարփակոնին). Լըմնցաւ գործը, ըսածնուդ կը հաւանի։

Հարփակոն. Փառք քեզ Աստուած։

Մէթր Ժագ (Կլէանդոսին). Ամէն բան լմնցաւ. խոստմունքնիդ ընդունեց։

Կլէանդոս. Օրհնեալ է Աստուած։

Մէթր Ժագ. Պարոններ, կը մընայ հիմա միայն որ իրարու հետ խօսիք. հիմա իրարու համաձայն էք. քիչ մնաց որ մէկզմէկու խօսքը չհասկընալով պիտի կռուէիք։

Կլէանդոս. Սիրելիդ իմ Մէթր Ժագ, բոլոր կեանքիս մէջ շնորհակալ պիտի ըլլամ քեզ։

Մէթր Ժագ. Ըսածս չնչին բան մ'էր, պարոն։

Հարփակոն. Ինծի մեծ շնորհք մը ըրիր. աս գործդ վարձքի արժանի է։ (Հարփակոն իր գրպանը կը խառնէ. Մէթր Ժագ ձեռքը կ'երկնցնէ. բայց Հարփակոն իր թաշկինակէն զատ բան չհանելով կ'ըսէ) Դուն գնա, ես միտքս կը պահեմ աս ծառայութիւնդ, հոգ մ'ըներ։

Մէթր Ժագ. Ձեր խոնարհ ծառան եմ։

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ՀԱՐՓԱԿՈՆ. ԿԼԷԱՆԴՈՍ.

Կլէանդոս. Իմ ցուցըրած բարկութեանս համար ներումն կը խնդրեմ, հայր իմ։

Հարփակոն. Հոգ չէ։

Կլէանդոս. Ճշմարիտ կ'ըսեմ, չափազանց կը ցաւիմ աս բանիս համար։

Հարփակոն. Ես ալ չափազանց ուրախ եմ զքեզ այսպէս խելքդ գլուխդ տեսնելով։

Կլէանդոս. Խիստ բարեսիրտ էք որ իմ յանցանքս շուտով մոռնալ կ'ուզէք։

Հարփակոն. Մարդ դիւրաւ այնպիսի տղայոց յանցանքը կը մոռնայ, որոնք նորէն իրենց պարտքը կը ճանչնան։

Կլէանդոս. Իմ անմտութեամբ գործած յանցանքներուս մէկն ալ պիտի չյիշէք։

Հարփակոն. Քու հնազանդութիւնդ և ցուցըրած ակնածութեամբդ է որ կը պարտաւորեն զիս զանոնք մոռնալու։

Կլէանդոս. Կը խոստանամ, հայր իմ, որ ձեր երախտեաց յիշատակը մինչև գերեզմանը սրտիս մէջ պահելու եմ։



Հարփակոն. Ես ալ կը խոստանամ որ ինծմէ ինչ որ ուզես՝ պիտի տամ։

Կլէանդոս. Ա՛հ, հայր, ասկէ աւելի ուրիշ բան մը չեմ խընդրեր. եթէ Մարիանան ինծի տաք, բաւական կամքս կատարած էք։

Հարփակոն. Ի՞նչպէս։

Կլէանդոս. Կ'ըսեմ թէ, հայր իմ, շատ շնորհակալ եմ ձեզմէ, և Մարիանան ինծի տալնիդ՝ ամէն բան տուած պիտ՝ըլլաք։

Հարփակոն. Ո՞վ Մարիանան քեզի տալու խօսքը կ'ընէ։

Կլէանդոս. Դուք, հայր իմ։

Հարփակոն. Ե՞ս։

Կլէանդոս. Անտարակոյս։

Հարփակոն. Ի՞նչպէս, դուն չէի՞ր որ անորմէ հրաժարելու խօսք տուիր։

Կլէանդոս. Ե՞ս անորմէ հրաժարիմ։

Հարփակոն. Այո։

Կլէանդոս. Ամենևին։

Հարփակոն. Դուն չըսի՞ր որ անոր խօսքը պիտի չընես։

Կլէանդոս. Ասոր հակառակը, առաջուանէ աւելի սէր կապեցի վրան։

Հարփակոն. Ի՞նչ, դարձեալ, նորէ՞ն կ'ըսկսիս։

Կլէանդոս. Բան մը չկրնար միտքըս փոխել։

Հարփակոն. Գլուխդ կը ջախջախեմ, անզգամ։

Կլէանդոս. Ձեռքերնուդ եկածը ընէնիդ մի թողուք։

Հարփակոն. Ասկէ ետքը չեմ ուզե՛ր որ ալ երեսս տեսնես։

Կլէանդոս. Իմ ուզածս ալ աս է։

Հարփակոն. Կը թողում քեզի։

Կլէանդոս. Թող։

Հարփակոն. Օ՛, քեզ իբրև որդի չեմ ճանչնար։

Կլէանդոս. Ի՛նչ ընեմ։

Հարփակոն. Օ՛, քեզ ժառանգութենէ կը զրկեմ։

Կլէանդոս. Ինչ որ կ'ուզէք՝ ըրէք։

Հարփակոն. Անէծքս կու տամ։

Կլէանդոս. Ձեր պարգևներէն չեմ վախնար։

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԿԼԷԱՆԴՈՍ. ԼԱ ՖԼԷՇ.

Լա Ֆլէշ (Արկղիկ մը բռնած պարտէզէն դուրս ելլելով). Ա՛հ, պարոն, ի՛նչպէս աղէկ ատեն զձեզ հոս գտայ։ Ետևէս եկէք շուտով։

Կլէանդոս. Ի՞նչ կայ։

Լա Ֆլէշ. Ետևէս եկէք, կ'ըսեմ. գործերնիս յաջող է։

Կլէանդոս. Ի՞նչպէս։

Լա Ֆլէշ. Ահա՛ գործերնիդ։

Կլէանդոս. Ի՞նչ։

Լա Ֆլէշ. Բոլոր օրը աս վաստըկեցայ։

Կլէանդոս. Ի՞նչ է աս։

Լա Ֆլէշ. Ձեր հօրը գանձը որն որ ձեռք ձգեցի։

Կլէանդոս. Ի՞նչպէս ըրիր։

Լա Ֆլէշ. Ամէն բան կ'իմանաք։ Փախչինք, անոր ձայները կը լսեմ։

ՏԵՍԱՐԱՆ Է.

ՀԱՐՓԱԿՈՆ (պարտէզէն մէջէն գողին պոռալով)։

Բռնեցէք, բռնեցէք գողը, աւազակը, մարդասպանը։ Արդարութիւն, արդար Աստուած. կորսուեցայ, կողոպտուեցայ։ Ստակս գողնալով վիզս կտրեցին

Ո՞վ կրնայ ըլլալ։ Ի՞նչ եղաւ։ Ո՞ւր է։ Ո՞ւր պահուեցաւ։ Զայն գտնելու համար ի՞նչ ընեմ։ Ո՞ւր փաղեմ։ Ո՞ւր չփաղեմ։ Նայեցէք հոն չէ՞։ Հոս չէ՞։ Ո՞վ է աս։ Լռեցէք։ (Ինքնիրեն իր Թեւը բռնելով) Անզգամ, տոտիկս ետ դարձուր ... Ահ, ես եմ եղեր ... խելքս շփոթած է, և չեմ գիտեր թէ ուր եմ, ով եմ և ինչ կ՚ընեմ։ Ափսոս, իմ խեղճ տոտիկս, սիրելի՛ բարեկամս, քեզմէ զրկեցի՞ն զիս։ Դու բոլորովին զիս թողուցիր, իմ պատսպարանս, իմ մխիթարութիւնս և ուրախութիւնս կորսնցուցի․ ինծի համար ամեն բան լմնցաւ, և ալ չեմ ուզեր աշխարհի երեսը նայիլ։ Առանց քեզի անկարելի է ինծի որ ապրիմ։ Մեռնիմ, ալ չեմ կրնար․ կը մեռնիմ, մեռայ, Թաղուեցայ։ Չկա՞յ մէկը որ տոտիկս ետ տալով զիս նորէն կենդանացընէ, կամ ինծի իմացընէ թէ ով է առնողը։ Հէ՞ ինչ կ՚ըսես։ Մէկը չէ։ Աս գողութիւնն ընողը խիստ մեծ ուշադրութեամբ ժամը գիտեր է․ և ճիշդ իմ անզգամ որդւոյս հետ խօսելու ատենս որսցեր է։ Դուրս ելլենք․ երթամ դատաւորը բերեմ, և բոլոր տանս մէջ եղող մարդիկը հարցփորձ ընել տամ․ աղախիններս ծառաներս, որդիս, զիս ալ։ Որչափ մարդիկ են ժողվեր հոն։ Որու երեսը որ նայիմ, անոր վրայ կը կասկածիմ, և ամենքն ալ իմ գողս կը կարծեմ։ Դէք նայիմ ի՞նչ բանի վրայ կը խօսիք հոն, տոտիկս գողցողին վրայ։ Ի՞նչ ձայն կայ վերը։ Գողս հո՞ն է արդեօք։ Կ՚աղաչեմ, թէ որ գողիս վրայօք բան մը գիտէք, ըսէք ինծի։ Ձեր մէջը պահուած է։ Ամենքն ալ ինծի կը նային և կ՚ըսկսին խնդալ։ Անշուշտ ասոնք ալ գողցուած բանին մէջ մաս ունին։ Շուտով գործակալներ, զինուորներ, ոստիկաններ, դատաւորներ, տանջանքներ, կախաղաններ և դահիճներ բերէք, ամեն մարդ կախել կ՚ուզեմ։ Եւ եթէ տոտիկս չգտնեմ, ես ալ անոնցմէ ետքը ինքզինքս պիտի կախեմ։

## ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՐՓԱԿՈՆ․ ԳՈՐԾԱԿԱԼ ՄԸ

Գործակալ․ Հոգ մ՚ընէր․ փառք Աստուծոյ, ես իմ արհեստս գիտեմ։ Այսօր չէ որ ես գող բռնելու կ՚ըսկսիմ․ և որչափ մարդ որ կախել տուեր եմ, այնչափ հազար ֆրանգի քսակ ունենայի՝ ուրիշ բան չէի ուզեր։

Հարփակոն․ Ամեն գործակալները կը պարտաւորին աս գործը ձեռք ձգելու․ և եթէ տոտիկը չգտնուի, դատաւորը դատաստանի պիտի կանչեմ։

Գործակալ․ Պէտք է որ ամեն հարկ եղած տեղեկութիւններն ունենանք․ աս արկղին մէջ որչափ ստակ կայ՝ ըսիր։

Հարփակոն․ Ճիշդ տասը հազար սկուդ (դալեռ)։

Գործակալ․ Տա՞սը հազար սկուդ։

Հարփակոն․ Այո՛, տասը հազար սկուդ։

Գործակալ․ Աս մեծ գողութի՜ է։



Հարփակոն․ Աս սոսկալի յանցանքին բաւական մեծ տանջանք չի կայ աշխարհիս մէջ․ և եթէ գողը անպատիժ մնայ, խիստ սրբ բաներն իսկ ապահոված մէջ չեն։

Գործակալ․ Ի՞նչ տեսակ ստակ էր։

Հարփակոն․ Անպակաս լուի տ՚օր* և կշռաքնին ծանր փիսթօլ**։

Գործակալ․ Աս գողութիւնը որո՞ւ վրայ կը կասկածիս։

Հարփակոն․ Ամեն մարդու վրայ, և պէտք է որ քաղաքը և բոլոր գիւղերը մէկտեղ բանտարկես։

Գործակալ․ Թէ որ ինծի կը նայիս, պէտք է որ մէկը չվախցընենք, և մեղմով աշխատինք․ առաջ բանի մը նշաններ բռնենք, որպէս զի ետքը խստիւ գողցուած ստակը գտնելու համար դատաստան ընենք։

### ՏԵՍԱՐԱՆ Բ․

ՀԱՐՓԱԿՈՆ․ ԳՈՐԾԱԿԱԼԸ․ ՄԷԹՐԸ ԺԱՔ․

Մէթրը Ժաք (Բեմին ներսը՝ մտած կողմէն ետ դառնալով)․ Հիմա կու գամ․ անմիջապէս փողոտէ, ոտքերը կասկարայի վրայ եփէ, ու զան եռացեալ ջրի մէջ դիր, և ետքը առաստաղէն կախէ։

Հարփակոն (Մէթր Ժագին)․ Ո՞վ, զիս կողոպտողը։

Մէթրը Ժաք․ Մէկ խոճկորի ([illegible]) վրայ է խօսքս, զոր տեսուչնիդ ղրկեր է, և ես իմ ուզածիս պէս պիտ՚ եփեմ զան։

Հարփակոն․ Մեր խօսքը անոր վրայ չէ․ ահա աս պարոնին հետ ուրիշ բանի վրայ պիտի խօսիս։

Գործակալ (Մէթր Ժագին)․ Ամենեւին մ՚ վախնար․ ես զքեզ դայթակղեցընող չեմ, և քաղցրութեամբ պիտի խօսիմ։

Մէթրը Ժաք․ Այս պարոնը գիշերուան ձեր սեղանակիցներէ՞ն է։

Գործակալ․ Սիրելիս, պէտք է որ ամեն բան յայտնես տիրոջդ։

Մէթրը Ժաք․ Ճշմարիտ կ՚ըսեմ, պարոն, ամեն գիտցածս պիտ՚ ընեմ․ և կրցածիս չափ պիտի ջանամ աղէկ սեղան մը հանել ձեզի։

Հարփակոն․ Գործերնիս աս չէ։

Մէթրը Ժաք․ Եւ թէ որ ուզածիս պէս փափուկ կերակուրներ չկրնամ ընել, յանցանքը պարոն տեսուչինն է, որ իր խնայութեան մկրատովը թևերս կտրեց։

Հարփակոն․ Անզգամ, ընթրիքէն ուրիշ բանի վրայ է խօսքերնիս․ և կ՚ուզեմ որ գողցուած ստակիս համար ինծի լուրեր տաս։

Մէթրը Ժաք․ Ստակդ գողցա՞ն։

Հարփակոն․ Այո՛, անզգամ․ ըզքեզ կախել պիտի տամ թէ որ չգտնաս զան։

Գործակալ (Հարփակոնին)․ Տէր Աստուած․ հետը այնպէս խստիւ մի վարուիր․ կերպարանքէն կը տեսնեմ որ պարկեշտ մարդ մ՚է, որ առանց բանտ մտնելու ամեն բան պիտի յայտնէ ձեզի։ Այո՛, սիրելիս, թէ որ եղածը խոստովանիս, ամենևին վնաս մը չկայ քեզի, և ըստ արժանւոյն տէրդ պիտի վարձատրէ զքեզ։ Այսօր իր դրամը գողցեր են, և անկարելի է որ դուն աս գործին վրայ բան մ՚իմացած չըլլաս։

Մէթրը Ժաք (Կամաց մը՝ մէկուսի)․ Ահա մեր տեսուչէն վրէժս առնելու աղէկ միջոց մ՚է աս։ Աս

* 20 ֆրանգնոց ոսկի Գաղղիական։

** 10 ֆրանգնոց ոսկի Գաղղիական։

տունը մտնելէն 'ի վեր, ամենուն սիրելի է. միայն իր խօսքը մտիկ կ'ընեն. անորմէ կերած գաւազանի հարուածներս դեռ սրտիս վրայ են :

Հարփակոն. Ի՞նչ կը մռմռաս հոս:

Գործակալ (Հարփակոնին). Ինք իր գլխուն թողուցէք: Կը պատրաստուի որ ձեզ գոհ ընէ, և ես ձեզի ըսի որ պարկեշտ մարդ մ'է :

Մէթր Ժագ. Պարոն, թէ որ կ'ուզէք որ ձեզ իմացընեմ, կարծեմ թէ ձեր պարոն տնտեսն է աս գողութիւնը ընողը :

Հարփակոն. Վալէրիո՞սը :

Մէթր Ժագ. Այո :

Հարփակոն. Ան որ ինծի այնչափ հաւատարիմ կ'երևի :

Մէթր Ժագ. Նոյն ինքն. կարծեմ թէ ան գողցաւ :

Հարփակոն. Ի՞նչ բանի վրայ կը կարծես :

Մէթր Ժագ. Ի՞նչ բանի վրայ :

Հարփակոն. Այո :

Մէթր Ժագ. Ի՞նչ բանի վրայ . . . կարծածիս վրայ կը կարծեմ:

Գործակալ. Բայց պէտք է որ ունեցած ապացոյցներդ ալ ըսես :

Հարփակոն. Սնտուկը դրած տեղս անոր պտըտիլը տեսա՞ր :

Մէթր Ժագ. Այո, յիրաւի: Ու՞ր էր սնտուկդ :

Հարփակոն. Պարտէզին մէջ :

Մէթր Ժագ. Ճիշդ անոր պարտէզին մէջ պտըտիլը տեսայ: Ի՞նչ բանի մէջ էր սնտուկդ :

Հարփակոն. Արկղիկի մը մէջ :

Մէթր Ժագ. Այ՛, այո, ես ալ ձեռքը պզտիկ արկղ մը տեսայ :

Հարփակոն. Ի՞նչպէս շինուած էր ան արկղիկը, որ տեսնամ թէ իմս է :

Մէթր Ժագ. Ի՞նչպէս շինուած էր:

Հարփակոն. Այո :

Մէթր Ժագ. Ի՞նչպէս շինուած էր . . . արկղիկի մը պէս շինուած էր:

Գործակալ. Հասկըցանք. բայց նկարագրէ քիչ մը նայինք :

Մէթր Ժագ. Մեծ արկղիկ մ'էր:

Հարփակոն. Գողցուածը փոքր էր:

Մէթր Ժագ. Այ, այո, փոքր էր, դուք այդ մտօք իմացէք. ես մէջը պարունակածին պատճառաւը մեծ ըսի :

Գործակալ. Ի՞նչ գոյն ունէր :

Մէթր Ժագ. Ի՞նչ գոյն ունէր :

Գործակալ. Այո :

Մէթր Ժագ. Մէկ գոյն մ'ունէր . . . բան, մէկ գոյն մը . . . Դուք ըսէք :

Հարփակոն. Ըսէ նայիմ :

Մէթր Ժագ. Կարմիր չէ՞ր :

Հարփակոն. Մոխրագոյն էր :

Մէթր Ժագ. Այ՛, այո, մոխրագոյն կարմիր : Զանիկ կ'ուզէի ըսել :

Հարփակոն. Տարակոյս չկայ. իմ արկղս է ստուգիւ: Գրէ, պարոն, գրէ տուած վկայութիւնը: Աստուած, այսուհետև որո՞ւ վստահիլ պէտք է. ալ մէկուն չեմ հաւատար. և կարծեմ թէ ասկէ ետև ես զինքս պիտի գողնամ:

Մէթր Ժագ (Հարփակոնին). Պարոն, ահա ան է որ հոս կու գայ: Գոնէ մի ըսէք անոր թէ ես աս բանս ձեզի յայտնեցի :

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ՀԱՐՓԱԿՈՆ, ԳՈՐԾԱԿԱԼ, ՎԱՂԵՐԻՈՍ, ՄԵԹՐ ԺԱԳ.

Հարփակոն. Հոս եկու, անզգամ, և քու ըրած խիստ անօրէն գործըդ և ամենասոսկալի յանցանքդ խոստովանէ :

Վաղերիոս. Ի՞նչ կ'ուզէք ըսել, պարոն :

Հարփակոն. Ի՞նչ, անզգամ, չե՞ս ամչնար ըրած յանցանքէդ :

Վաղերիոս. Ի՞նչ է իմ յանցանքս:

Հարփակոն. Անօրէն, ի՛նչ է քու յանցանքդ մի. այնպէս կը խօսիս որպէս թէ չես գիտեր թէ ինչ ըսել կ'ուզեմ: Պարապ տեղը կը ջանայիր ըրածդ մեզմէ պահելու. գաղտնիքը յայտնուեցաւ, և ամեն բան եկան իմացուցին ինծ : Գարշելի, իմ քեզի ըրած բարերարութեանցս փոխարէն՝ ինծի այսպէս անօրէնութիւն ընես, և իմ տունս գիտմամբ ծառայու մտնես, որպէս զի զիս խաբես, որպէս զի այսպէս նենգութիւն ընես ինծի :

Վաղերիոս. Պարոն, որովհետև ամեն բան յայտներ են ձեզի, բնաւ չեմ ուզեր զձեզ խաբել և ըրածս ուրանալ :

Մէթր Ժագ (առանձին). Ո՛, հօ՛, արդեօք չգիտնալով ըրածը գուշակեցի :

Վաղերիոս. Միտք ունէի անոր վրայօք ձեզ խօսելու, բայց պատեհ առիթի կ'սպասէի. ուստի կ'աղաչեմ որ բնաւ չբարկանաք, և իմ իրաւունքս լսելու հաճիք:

Հարփակոն. Բայց ինչ իրաւունք պիտի կարենաս ունենալ, անօրէն գող :

Վաղերիոս. Ա, պարոն, այդ անուններուն արժանի չեմ. իրաւ որ ձեզի դէմ յանցանք մը գործեցի. բայց 'ի վերայ այսր ամենայնի սխալմունքս ներելի է :

Հարփակոն. Ի՞նչպէս ներելի. աս տեսակ դաւաճանութիւն մը, աւազակութիւն մը կրնա՞յ ըլլալ :

Վաղերիոս. Շնորհք ըրէք, մի՛ բարկանաք: Երբ ինծի լսէք՝ պիտի տեսնէք որ յանցանքս կարծածնուդ չափ մեծ չէ :

Հարփակոն. Յանցանքը կարծածիս չափ մեծ չէ՞ մի: Իմ արիւնս, իմ աղէքս յափշտակեցիր, անիրաւ:

Վաղերիոս. Արիւնդ, պարոն, անիրաւի ձեռք չինկաւ: Անոր վընաս մը հասցընելու կարող չեմ. և ասոր փոխարէն՝ ինչ որ կ'ուզէք՝ կը հատուցանեմ:

Հարփակոն. Իմ ուզածս ալ աս է որ դուն քու յափշտակածիդ տեղը լեցընես :

Վաղերիոս. Ձեր պատուոյն համար, պարոն, բոլորովին գոհ պիտ'ըլլաք :

Հարփակոն. Պատուոյ վրայօք խօսք չկայ հոս: Բայց, ըսէ ինծի, ո՞վ քեզի աս գործը ընելու դրդեց:

Վաղերիոս. Ափսո՜ս, կը հարցընէ՞ք:

Հարփակոն. Այո, կը հարցընեմ:

Վաղերիոս. Աստուած մը՝ որ իրեն համար ինչ որ ընենք, կը ներէ, այսինքն է՝ Սէրը :

Հարփակոն. Սէ՞րը :

Վաղերիոս. Այո :

Հարփակոն. Ո՛հ, շիտակը աղէկ սէր, իմ ոսկիներուս սէրը, այնպէս չէ՞ :

Վաղերիոս. Ոչ, պարոն, ձեր հարստութիւնները չդրդեցին զիս որ աս գործն ընեմ, աս չէ իմ սիրտս յափշտակողը, և կը խոստովանիմ որ ձեր հարստութենէն բան մը չեմ խնդրեր, միայն թէ ունեցածս ինծի ձգէք: —

Հարփակոն. Ոչ, յիրաւի բան մը պիտի չթողում: Բայց նայեցէք

ի՛նչ յանդուգն մարդ մ՚է սա, որ կ՚ուզէ ինծմէ գողցած բանը պահել։

Վալերիոս. Աս բանը գողութիւն կը կոչէք դուք։

Հարփակոն. Ի՛նչ, այնպէս գանձ մը գողնալը գողութիւն չըսեմ։

Վալերիոս. Ճշմարիտը գանձ մ՚է, և այնպէս գանձ մը՝ որ անտարակոյս բոլոր ունեցածէդ ալ թանկագին է. բայց մի՛ գիտնաք որ զան ինծի ձգելով կորսնցուցած ըլլաք։ Խոնարհութեամբ աս հրաշալի գանձը կը խնդրեմ. և կ՚ուզեմ որ ձեր կամքովը զան ինծի տաք։

Հարփակոն. Բան մը չեմ ըներ. Բայց ի՛նչ ըսել են ասոնք։

Վալերիոս. Մենք իրարու վրայ փոխադարձ սէր ունենալու համար խօսք տուած ենք և երդում ըրինք որ բնաւ մէկզմէկ չթողունք։

Հարփակոն. Աս ի՛նչ զարմանալի երդում է, և ի՛նչ ծաղրական խոստմունք։

Վալերիոս. Այո, մենք իրարու խօսք տուած ենք յաւիտեան մէկզմէկէ չզատուելու։

Հարփակոն. Ճշմարիտ կ՚ըսեմ ես արգելք պիտ՚ըլլամ։

Վալերիոս. Մահուանէ զատ բան մը չկրնար զմեզ իրարմէ բաժնել։

Հարփակոն. Աս ի՛նչպէս տարփամամբ սաստկիս սիրահարիլ է։

Վալերիոս. Ես արդէն ձեզի ըսի, պարոն, որ աս գործը շահէ դրդուելով չըրի։ Իմ սիրտս ամենևին ձեր մտքէ անցուցածները 'ի գործ չդրաւ, այլ ուրիշ աւելի ազնուական պատճառ մը ունիմ որ աս գործը ընելու դրդեց զիս։

Հարփակոն. Կը տեսնէք, քրիստոնէաբար կ՚ուզէ ունեցածիս տէր ըլլալ։ Բայց ես պիտի հրամայեմ, անզգամ գործչիլ, որ դատաւորը աս դատաստանը կտրէ։

Վալերիոս. Ուզածնիդ կրնաք ընել, և ահա ես ալ պատրաստ եմ ձեր հրամայած պատիժները կրելու։ Բայց, կ՚աղաչեմ, վստահ եղէք գոնէ որ յանցանքը միայն իմս է, և աղջիկնիդ բնաւին յանցանք չունի աս բանիս մէջ։

Հարփակոն. Անշուշտ, ես ալ այդպէս կը կարծեմ. արտաքոյ կարգի բան մը պիտ՚ըլլար, եթէ աղջիկս ալ այսպէս մեղքի մէջ ձեռնամուխ եղած ըլլար։ Բայց ես կ՚ուզեմ կորսնցուցածս շահիլ, պէտք է որ խոստովանիս թէ ո՞ւր տարիր զան։

Վալերիոս. Ե՞ս, ես դուրս չտարի զան, և տակաւին ձեր տանը մէջն է։

Հարփակոն (մեկուսի). Ո՜հ, իմ սիրելի արկղիկս։ (Բարձր ձայնով) Տունէս դուրս չելա՞ւ։

Վալերիոս. Ո՛չ, պարոն։

Հարփակոն. Հա՛, ըսէ նայինք անգամ մը՝ անոր մօտեցի՞ր բնաւ։

Վալերիոս. Ե՞ս, անոր մօտիմ։ Ա՜հ, զինքն ալ զիս ալ կը մեղադրէք, պարոն. ես մէկ անկեղծ և անմեղ սիրով անոր այրեցայ։

Հարփակոն (ինքնիրեն). Իմ արկղիս համար այրեր է։

Վալերիոս. Աւելի կ՚ուզեմ մեռնիլ քան անոր մէկ մեղադրական խորհուրդ մը յայտնել. և աս կողմանէ ան խիստ խելացի և պարկեշտ է։



Հարփակոն (ինքնիրեն). Արկղս պարկեշտ է։

Վալերիոս. Իմ բոլոր բաղձանքս անոր տեսութիւնը վայելել է. և երբէք մեղանչելի գործ մը՝ իր գեղեցիկ աչքերուն իմ սրտիս ազդած եռանդուն սէրը չպղծեց։

Հարփակոն (ինքնիրեն). Արկղիս գեղեցիկ աչքերը։ Այնպէս կը խօսի անոր վրայօք որ կարծես թէ իր սիրահար տիկինն է։

Վալերիոս. Կլօտ տիկինը, պարոն, աս անցքին ճշմարտութիւնը գիտէ. և ան կրնայ ձեզի վկայութիւն տալ...

Հարփակոն. Ի՞նչ, ծառաս աս գործին մեղսակի՞ց է։

Վալերիոս. Այո, պարոն, ան մեր խօսքկապին վկայ եղաւ. սակայն մինչև որ իմ սիրոյս պարկեշտութիւնը չճանչցաւ՝ աղջիկդ չհամոզեց որ իր խօսքը ինծի տայ և իմս ընդունի։

Հարփակոն. Ի՞նչ։ (Ինքնիրեն) Արդեօք դատաւորին երկիւղը այսպէս ցնորել կու տայ։ (Վալերիոսին) Աղջկանս վրայօք ի՞նչ կը զառանցես։

Վալերիոս. Պարոն, կ՚ըսեմ թէ խիստ մեծ դժուարութիւն կրեցի, մինչև որ անոր սիրտը ըրի։

Հարփակոն. Որո՞ւն սիրտը։

Վալերիոս. Աղջկնուդ. և դեռ երէկ միայն հաւանեցաւ որ ամուսնութեան խոստման ստորագրութիւնը իրարու տանք։

Հարփակոն. Աղջիկս ամուսնութեան խոստման ստորագրութիւն տուաւ քեզի։

Վալերիոս. Այո, պարոն, ինչպէս ես ալ իմ կողմէս իրեն տուի։

Հարփակոն. Ո՜վ Աստուած, ա՛ս ուրիշ ձախորդութիւն մ՚ալ։

Մէթր Ժագ (գործակալին). Գրեցէք, պարոն, գրեցէք։

Հարփակոն. Աս ի՛նչ սոսկալի աղէտ է, ի՛նչ ահագին յուսահատութիւն։ (Գործակալին) Ժամանակ մ՚անցըներ, պարոն, պաշտօնդ կատարէ, և ասոր դատը իբրև աւազակի մը և մոլորեցուցիչի մը պէս տես։

Մէթր Ժագ. Այո, աւազակի և մոլորեցուցիչի պէս։

Վալերիոս. Աս անուններուն ես արժանի չեմ. և երբ իմ ով ըլլալս գիտնաք...

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ՀԱՐՓԱԿՈՆ, ԷԼԻԶԱ, ՄԱՐԻԱՆԱ, ՎԱԼԵՐԻՈՍ, ՖՐՈԶԻՆԱ, ՄԷԹՐ ԺԱԳ, ԳՈՐԾԱԿԱԼԸ։

Հարփակոն. Ա՜հ, անզգամ աղջիկ, ինծի պէս հօր մ՚անարժան աղջիկ, իմ քեզի տուած դասերս ասանկ կը կատարես։ Դուն այսպէս անօրէն գողի մը սիրահարի՛ս, և առանց իմ հաւանութեանս խօսք տա՛ս։ Բայց երկուքնիդ ալ պիտի սխալիք։ (Էլիզային) Չորս հաստատ պատերու մէջ զքեզ փակելով, կը հասկըցընեմ քեզ։ (Վալերիոսին) Օ՛, քեզ ալ, յանդուգն չարագործ, կախել պիտի տամ։

Վալերիոս. Ձեր կիրքովը մեր գործը չեն դատեր, ու գոնէ զիս դատապարտելէն առաջ՝ ինծի ունկնդրութիւն պիտ՚ընեն։

Հարփակոն. Կախել պիտի տամ ըսելով սխալեցայ. ողջ ողջ անիւի վրայ չարչարել տալու եմ զքեզ։

Էլիզա (Հարփակոնին ծնկները ինալով). Ա՜հ, հայր իմ, քիչ մը գութ ունեցէք մեր վրայ, կ'աղաչեմ. և մի՛ հայրական իշխանութիւնիդ բարկութեան ենթակայ ընէք։ Մ՛ի, կ'աղաչեմ, ձեր յուզեալ կիրքը անձնատուր ըլլաք. մտածեցէք քիչ մը թէ ինչ կ'ուզէք ընել։ Նայեցէք, թէ որ կը հաճիք, թէ զո՛վ կը մեղադրէք։ Տարակոյս չկայ որ ձեր աչքերը աղէկ չեն որոշեր. երբ՝ գիտնայիք որ առանց անոր աղջիկնիդ պիտի չ'ապրէր մինչև հիմա, անշուշտ զիս այսչափ պիտի չմեղադրէիք։ Այո՛, հայր, ան է որ զիս ան ջուրէն ազատեց, ուր կեանքըս վտանգի մէջ էր, և աս նոյն աղջիկնուդ կեանքը աս մարդուն կը պարտիք, որ . . .

Հարփակոն. Աս ամէն բաները ոչ ինչ են. և ես աւելի աղէկ ունէի որ ձգէր և խղդուէիր քան ան գործը ընէր։

Էլիզա. Հայր իմ, կ'աղաչեմ որ ձեր հայրական սիրոյն համար զիս . . .

Հարփակոն. Ո՛չ, ո՛չ, ամենևին մտիկ ընել չեմ ուզեր. պէտք է որ դատաւորը իր պարտքը կատարէ։

Մէթր Ժաք (մեկուսի). Ինծի տուած ծեծերուդ փոխարէնն է աս։

Ֆրոզինա (մեկուսի). Աս ինչ արտառոց շփոթութիւն է։

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԱՆՍԵԼՄ, ՀԱՐՓԱԿՈՆ, ԷԼԻԶԱ, ՄԱՐԻԱՆԱ, ՖՐՈԶԻՆԱ, ՎԱԼԵՐԻՈՍ, ԳՈՐԾԱԿԱԼ, ՄԷԹՐ ԺԱՔ։

Անսելմ. Ի՞նչ է աս, պարոն Հարփակոն, բոլորովին խռոված կը տեսնեմ զքեզ։

Հարփակոն. Ա՜հ, պարոն Անսելմ, ինծի պէս դժբաղդ մարդ կա՞յ. բռած դաշինքէդ ետքը տես ինչ ձիւն և ձախորդութիւն եկաւ գլուխս։ Ունեցածս յափշտակեցին, պատիւս մէկ տակն ըրին. ահա՛ աս անզգամը, աս անիրաւն է, որ սուրբ օրէնքները ոտքի տակ առաւ, ու ծառայ անուամբ իմ տունս մտնելով՝ ստակս գողցաւ և աղջիկս մոլորեցուց։

Վալերիոս. Ստակնիդ ո՞վ գողցաւ, որուն համար այդչափ պարապ խօսքեր կ'ընէք։

Հարփակոն. Այո՛, երկուքն ալ իրարու կարգուելու խօսք տուեր են։ Պարոն Անսելմ, աս նախատինքը քեզի է. դուն պէտք ես ասոր ետևէն իյնալ և աս յանդգնութիւնը պատժել։

Անսելմ. Ինծի համար՝ ես չեմ ուզեր բռնի կարգուիլ, և չեմ կրնար ուրիշի տուած սիրտ մ'ընտրել. բայց քու՝ ինչպէս նաև իմ շահուցս համար պատրաստ եմ աս գործը կարգի դնելու։

Հարփակոն. Ահա՛ աս պարոնը արժանաւոր գործակալ մ'է, որ ինչպէս ինքը ինծի ըսաւ, իր պաշտօնը կատարելու 'ի գործ պիտի դնէ։ (Գործակալին՝ Վալերիոսը ցուցնելով) Ինչպէս որ պէտք է՝ ասոր յանցանքները նշանակէ, պարոն, և խիստ անգթութիւն բանեցուր։

Վալերիոս. Աղջիկնիդ սիրելուս չեմ գիտեր թէ ինչ յանցանք կրնան գտնել իմ վրաս, և եթէ իմ ով ըլլալս յայտնուի, ձեր կարծած պատիժը չպիտի կրեմ։

Հարփակոն. Ատ ամէն առասպելները մտիկ չեմ ըներ, և հիմա



աշխարհս ազնուական աւազակներով և խաբեբաներով լեցուն է, որոնք իրենց ով ըլլալը պահելով՝ լրբութեամբ երևելի անուն մը կը հագնին։

Վալերիոս. Իմացէք որ սիրտս անկեղծ ըլլալուն համար՝ իմս չեղած բանը չեմ ուզեր ինծի սեփհականել. ամէն զաս բոլոր Նէապոլիս քաղաքը իմ ծննդեանս վկայութիւնը կրնայ տալ։

Անսելմ. Կամա՛ց եկուր. զգուշացիր ըսելու խօսքէդ։ Չգիտնալով բերնովդ սխալեցար. այնպիսի մարդու մ'առջև կը խօսիս, որուն բոլոր Նէապոլիս ծանօթ է, և առանց դժուարութեան պատմուեդ սուտութիւնը պիտ'իմանայ։

Վալերիոս (պատուաւորութեամբ գլխարկը գլուխը դնելով). Տեղէ՛ մը վախ չունիմ. թէ որ Նէապոլիս ձեզի ծանօթ է, գիտէ՞ք տոն Թովմաս տ'Ալպուրչին ով է։

Անսելմ. Այո՛, գիտեմ. կրնամ ըսել որ ինծմէ աւելի մօտ բարեկամ չունեցաւ։

Հարփակոն. Հիմա տոն Թովմասին ալ կ'ըսեմ տոն Մարթէնին ալ։ (Հարփակոն երկու ճրագ վառած տեսնելով, մէկը կ'անցնէ)։

Անսելմ. Ձգէ թող խօսի, կ'աղաչեմ. տեսնենք ինչ պիտ'ըսէ անոր վրայօք։

Վալերիոս. Ըսել կ'ուզեմ որ ան է իմ հայրս։

Անսելմ. Տոն Թովմա՞ս։

Վալերիոս. Այո՛։

Անսելմ. Շիտակ չէ ըսածդ։ Անանկ բան մը պատմէիր որ յարմարէր. մի կարծեր որ այդ խաբէութեամբ զքեզ պիտի կարենաս ազատել։

Վալերիոս. Մտածեցէք ու ետքը խօսեցէք։ Ամենևին խաբէութիւն չէ ըսածս, և կրնամ ստուգելու։

Անսելմ. Ի՞նչպէս կը համարձակիս տոն Թովմաս տ'Ալպուրչիին որդին եմ ըսելու։

Վալերիոս. Այո՛, կը համարձակիմ, և պատրաստ եմ ո՛ր և իցէ մէկու դէմ աս ճշմարտութիւնը հաստատելու։

Անսելմ. Աս ինչ զարմանալի համարձակութիւն է։ Քու խաբէութիւնդ երևան հանելու համար կ'ըսեմ թէ՝ տասն և վեցը տարի չկայ որ խօսեցած մարդդ Նէապոլսոյ խռովութեանց ժամանակը տեղի ունեցած անգութ հալածանքներէն ազատելու համար, (որ տասն անթիւ ազնուական գերդաստաններ աքսորուեցան) իր զաւակներովը և կնիկովը փախչելու ատենը ծովու մէջ կորսուեցաւ։

Վալերիոս. Այո՛. բայց ես ալ ձեզի կ'ըսեմ ձեր տարակոյսը փարատելու համար որ՝ անոր եօթը տարեկան որդին ծառայի մը հետ սպանիացի նաւով մ'աս նաւաբեկութենէն ազատեցաւ, և այս ազատեալ որդին է ձեր հետը խօսակցողը։ Իմացէք որ այս նաւուն տէրը թշուառութեանս վրայ մեղքընալով իր որդւոյն պէս զիս մեծցուց, և երբ կորձութեան հասակը հասայ, զինուորութեան մտայ։ Անկէ քիչ մ'ետքը իմացայ որ հայրս մեռած չէ, ինչպէս որ ես միշտ այնպէս կարծած էի։ Երթալ զինքը գտնելու համար հոս գալով՝ դիպուածով սիրաւուն Էլիզան տեսնելու արժանի եղայ, ու անոր գեղեցկու-

թնը զարնուեցայ․ սիրոյս սաստկութիւնը և անոր հօրը խստութիւնները տեսնելով՝ որոշեցի որ անոնց տունը ծառայութեան մտնեմ, և իմ տեղս ուրիշ մէկը խրկեցի ծնողքս փնտռելու ։

Անսելմ․ Բայց քու խօսքերէդ զատ՝ ուրիշ ի՞նչ վկայութիւններ կրնաս տալ մեզի որ մենք ալ գիտնանք ճշմարտութեան վրայ առասպել մը չհնած ըլլալդ ։

Վալերիոս․ Սպանիացի նաւապետը, հօրս յանձնած կնիքը, ակատեայ* ապարանջան մը, որն որ մայրս թևս դրեր էր, ծերունի Պետրոս ծառանիս, որ ինծի հետ նաւաբեկութենէն ազատեցաւ ։

Մարիանա․ Ո՛հ, ի՞նչ կը լսեմ․ կը հաստատեմ ես ալ որ ասոր մէջ խաբէութիւն չկայ․ և ամէն ըսածներդ ինծի կ՚իմացընեն յայտնապէս որ դուն իմ եղբայրս ես ։

Վալերիոս․ Դո՞ւն ես իմ քոյրս ։

Մարիանա․ Այո՛․ բերանդ բանալէդ հետէ սիրտս շարժեցաւ․ մեր մայրը, որ հիմա ուրախութեամբ պիտի տեսնես, մեր ընտանեաց դժբաղդութեանցը վրայ շատ անգամ ինծի պատմած է ։ Աստուած զմեզ ալ ան գառն նաւաբեկութեան մէջ կորսնցընել չուզեց․ բայց կեանքերնիս ազատելով գերի եղանք․ քանի քանի մը ծովապատակներ մայրս և զիս բռնեցին՝ երբ մենք փարատուած նաւուն կտորի մը փաթթուեր էինք ։ Տասը տարի գերութենէ ետքը, երջանիկ դիպուածով մը ազատեցանք, և նորէն Նէապոլիս դարձանք, ուր բոլոր մեր ունեցածները ծախած գտանք, ու մեր հօրը վրայ լուր մը չկրցանք առնուլ հոն ։ Ջենովա անցանք, ուր մայրս գնաց որ ժառանգութենէ մնացած քիչ մը բանը ձեռք ձգէ, բայց ան ալ չառաւ ։ Անկէ ալ իր ազգականացը անգութ անիրաւութենէն փախչելով՝ աս կողմերը եկաւ, ուր գրեթէ թըշուառ կեանք մ՚անցուց ։

Անսելմ․ Ով Տէր, որչափ մեծ է քու զօրութիւնդ ։ Այո՛, դո՛ւն միայն կարող ես հրաշք գործելու ։ Գրկեցէք զիս, իմ զաւակներս, և երկուքնիդ ալ ուրախութիւնիդ ձեր հօրը ուրախութեան հետ խառնեցէք ։

Վալերիոս․ Դո՞ւք էք մեր հայրը ։

Մարիանա․ Դո՞ւք էք՝ որուն համար մայրս այնչափ արցունք թափեց ։

Անսելմ․ Այո՛, աղջիկս, այո՛, տղաս, ես եմ տոն Թօմմասօ տ՚Ալպուրչի ։ Աստուած բոլոր ունեցած ստակովս ալիքներէն պահպանեց զիս ։ Զձեզ տասն և վեց տարիէն ՚ի վեր մեռած կարծելով կը պատրաստուէի երկար ճամբորդութիւններէ ետև մէկ քաղցր և հանճարեղ անձի մը հետ ամուսնանալով նոր գերդաստանի մը մխիթարութիւնը փնտռելու ։ Գիտնալով որ Նէապոլիս դառնալովս կեանքս վտանգի մէջ պիտի դնեմ, մէկ մ՚ալ ան քաղաքը չգացի․ հոն ունեցածս ծախել տալու միջոցներ գտայ, ու հոս բնակեցայ, ուր Անսելմ անունը կրելով, ուզեցի միւս անունին տրտմութիւնները հեռացընել, որ այնչափ ձախորդութեանց պատճառ եղաւ ինծի ։

* Գոհար կէս-լուսաւոր ։



Հարփակոն (Անսելմին)․ Քո՞ւ որդիդ է աս ։

Անսելմ․ Այո՛ ։

Հարփակոն․ Ուրեմն քեզ կը պարտաւորեմ անոր գողցած տասը հազար ոսկուդ հատուցանելու ։

Անսելմ․ Ան է գողցողը ։

Հարփակոն․ Այո՛, նոյն ինքն ։

Վալերիոս․ Ով ըսաւ ։

Հարփակոն․ Մէթրը Ժագը ։

Վալերիոս (Մէթրը Ժագին)․ Դո՞ւն ըսիր ։

Մէթրը Ժագ․ Կը տեսնես որ բան մը չեմ ըսեր ։

Հարփակոն․ Այո՛, ահա պարոն գործակալն ալ անոր տուած վկայութիւնը գրեց ։

Վալերիոս․ Բայց կը կարծէք որ այսպէս անարգ չարութիւն մը գործելու կարող ըլլամ ։

Հարփակոն․ Կարող կամ անկարող, ես իմ ստակս կ՚ուզեմ ։

## ՏԵՍԱՐԱՆ Զ․

ՀԱՐՓԱԿՈՆ, ԱՆՍԵԼՄ, ԵԼԻԶԱ, ՄԱՐԻԱՆԱ, ԿԼԷԱՆԴՐՈՍ, ՎԱԼԵՐԻՈՍ, ՓՐՈՁԻՆԱ, ԳՈՐԾԱԿԱԼԸ, ՄԷԹՐԸ ԺԱԳ, ԼԱ ՖԼԷՇ․

Կլէանդրոս․ Ամենևին սրտերնիդ մի՛ խռովցընէք, հայր իմ, և ամենևին մէկուն մեղքը մի՛ մտնաք ։ Ձեր գործին վրայօք լուրեր ըստացայ, և եկայ ձեզի ըսելու որ՝ եթէ կը հաւանիք զիս Մարիանային հետ կարգելու, կորսնցուցած ստակնիդ պիտի գտնէք ։

Հարփակոն․ Ո՞ւր է ստակս ։

Կլէանդրոս․ Ամենևին հոգ մ՚ընէք․ այնպէս տեղ մ՚է որ ամենևին երկիւղ չկայ, և ամէն բան ինձմէ կախեալ է ։ Ձեզ կը մնայ միայն ինծի ըսել թէ՝ ի՞նչ կ՚որոշէք․ Մարիանան ինծի կու տա՞ք, թէ՛ արկղը կը կորսնցընէք ։

Հարփակոն․ Մէջէն բան մը պակաս չէ՞ ։

Կլէանդրոս․ Բնաւ․ նայեցէք՝ միտք ունի՞ք աս ամուսնութիւնը ստորագրել և ձեր հաւանութիւնը տալ, ինչպէս որ անոր մայրը ինծի տուած, և մեր երկուքնուս ընտրութիւնը ընելու համաձայնութիւնը Մարիանային յանձնած է ։

Մարիանա (Կլէանդրոսին)․ Բայց չես գիտեր որ աս հաւանութիւնը միայն բաւական չէ, և Աստուած (Վալերիոսը ցուցնելով) եղբայր մը, և (Անսելմը ցուցնելով) հայր մ՚ալ տուաւ ինծի, որոնցմէ զիս պիտի խնդրես ։

Անսելմ․ Զաւակներս, Աստուած չներեր երբէք ինծի՝ որ ես ձեր բաղձանացը հակառակ ըլլամ ։ Պարոն Հարփակոն, աղէկ կրնաս վճռել որ երիտասարդ աղջկան մ՚ընտրութիւնը աւելի որդւոյն կ՚իյնայ քան թէ հօրը ։ Ուրեմն՝ վրադ խօսեցընել մի՛ տար, ու հաւանէ, ինչպէս որ ես կը հաւանիմ, աս կրկին հարսանեացը ։

Հարփակոն․ Ամենէն առաջ կ՚ուզեմ արկղս տեսնել ։

Կլէանդրոս․ Լման և ամբողջ պիտի տեսնէք զան ։

Հարփակոն․ Իմ զաւակացս ամուսնութեանը տալու ամենևին ըստակ չունիմ ։

Անսելմ․ Հոգ չէ․ ես ունիմ անոնց համար․ աս բանը դուն հոգդ մ՚ըներ ։

Հարփակոն․ Այս երկու հարսանեաց բոլոր ծախքերը ընելու

յանձն կ'առնեմ ։

Անսելմ. Այո՛, յանձն կ'առնում. գո՛հ եմ ։

Հարփակոն. Այո՛, միայն թէ հարսանեաց համար ինծի զգեստ մը շինել տայիր ։

Անսելմ. Գլխուս վրայ ։ Երթանք այսօրուան ուրախութիւնը վայելելու ։

Գործակալ. Հէ՜, պարոններ, ո՞ւր կ'երթաք. հոս եկէք նայինք, թէ որ կը հաճիք ։ Իմ գրերս ո՞վ պիտի վճարէ ։

Հարփակոն. Գրերուդ հարկաւորութիւն չունինք ։

Գործակալ. Բայց ոչինչ տեղը պիտի գրեմ զանոնք ։

Հարփակոն (Մէթր Ժագը ցուցնելով). Վ՛արձքդ կ'ուզես. ահա՛ աս մարդը քեզի ըլլայ. տար կախէ զան ։

Մէթր Ժագ. Ափսո՜ս, ի՞նչ ընել պէտք է արդեօք ։ Ճշմարիտ խօսելուս համար զիս կը ծեծեն, և սուտ խօսելուս համար կախել կ'ուզեն ։

Անսելմ. Պարոն Հարփակոն, ասոր աս խաբէութիւնը պէտք է ներել ։

Հարփակոն. Ուրեմն դո՛ւն պիտի վճարես գործակալը ։

Անսելմ. Թո՛ղ ըլլայ. երթանք շուտով մեր ուրախութիւնը ձեր մօրը հաղորդելու ։

Հարփակոն. Ես ալ իմ սիրելի արկղս տեսնելու ։

ՎԵՐՋ ԱԳԱՀԻՆ



2275

12013